Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

17994

325
η - 23

325
Պ-23

15 JAN 2010

A 4207

ՍՏԵՓԱՆՆՈՍ ՔԱՀԱՆԱՅ ՊԱՊԱՅԵԱՆ

ԱՅՆ ԼՈՒԳԱՆՍԿԻՑ

(ԱԿԱՄԱՅ ՊԱՏԱՍԽԱՆ ՀԵՐԹԵԻՑԵԱՆ-ԿԱՐԱԳԱՇԵԱՆ-ՀՐԱՑՐԻՆ)

Լեզու սուտ՝ ատեայ զձշմարտութիւն և բերան անդադար, առնէ խորվութիւն։

Գիրք Առակաց

300
Ա27-Պա

ԹԻՖԼԻՍ
ԵԼԵՔՏՐԱՅԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ, ՊՕԼԻՑ. 7.
1907. (86)

17 JUL 2013

17594

2 7 SEP 2006

ՍՏԵՓԱՆՆՈՍ ՔԱՀԱՆԱՅ ՊԱՊԱՅԵԱՆ

300
1727-ՊԱ

325
Պ-24

567

1004
30816

ԱՅՆ

ԼՈՒԳԱՆՍԿԻՑ

(ԱԿԱՄԱՅ ՊԱՏԱՍԽԱՆ ՀԵՐԹԵԻՑԵԱՆ-ԿԱՐԱԳԱՇԵԱՆ-ՀՐԱՅՐԻՆ)

Լեզու սուտ՝ ատեայ զծշմարտութիւնն և բերան անղաղար, առնէ խորվութիւն։

Գիրք Առակաց

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻ ՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԹԻՖԼԻՍ
ԵԼԵՔՏՐԱՅԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ, ՊՕԼԻՑ. 7.
1907 (86)

ՁԱՅՆ ԼՈՒԳԱՆՍԿԻՑ

1905 թուականին, Լուգանսկի հայազգի ժողովրդի միաձայն ընտրութեամբ փոխադրուեցինք Մելիտոպոլից Լուգանսկ։

Մելիտոպոլում՝ միամեայ քահանայագործութեանս ընթացքում, ժողովրդի հետ ապրեցինք խաղաղ, սիրով և ոչ մի ընդհարում չունեցանք։

Հոյակապ եկեղեցի, ուսուցիչարան, քահանայի համար փառաւոր բնակարան, գեղեցիկ ծառաստան եկեղեցու բակում։

Թէև, քահանայի ռոճիկը գոյանում էր ամսական կաժաւոր նուիրաբերութիւններից, բայց վարձատրութեան այդ ձևը ժամանակաւոր էր. եկեղեցական կալուածները վերադարձնելուց յետոյ քահանան իր ռոճիկը պիտի ստանար խանութների ամսավճարից, իւրաքանչիւր ամիս 50 ռ., որ աւելի պատուաւոր է կոպէկ-կոպէկ մուրացկանութեամբ հաւաքուած ռոճկից, ինչպէս կատարւում է այդ Լուգանսկում։

Ուրեմն՝ մենք կարող էինք այնտեղ աւելի ապահով ապրել, հանգիստ լինել, քան թէ Լու-

գանսկում, ուր ոչինչ չկար. ոչ եկեղեցի, ոչ ուսումնարան և ոչ էլ քահանայի բնակարան։

Զկամենալով երիտասարդական հասակում հանգիստ ապրել՝ մենք ընտրեցինք Լուգանսկը, ուր աւելի լայն ասպարէզ կար գործելու, աշխատելու և բացի այդ՝ Լուգանսկը համեմատաբար մօտ էր Կովկասին։

Մելիտոպոլից հեռանալս նախկին ծխերիս վրայ վատ տպաւորութիւն թողեց. շատերը կարծում էին, որ մենք Լուգանսկը ընտրել ենք նրա համար, որ այնտեղ աւելի շատ հարուստ մարդիկ կան (տեղւոյս ժողովուրդը-48 տուն, տաս տնով աւել է Մելիտոպոլի ժողովրդից)։

Պ. Խ. Մ-ի խանութում տեղափոխութեանս առթիւ արեց հետևեալ նկատողութիւնը.—«Տ. Հայր, հոսէն կերթաք հարուստ քաղաք, մեզի չհաւնեցիք ինչ։»

Մելիտոպոլի արդիւնաւոր քաղաքագլուխ՝ պ. Յ. Զերնիկեան, որը խելքի, կրթութեան և զարգացողութեան տէր անձն է՝ հրաժեշտի ողջոյն տալու ժամանակ ասաց ինձ հետևեալ խօսքերը.—«Տ. Հայր, պիտի երթաք. լաւ չարիք. ուրեմն մեզ «забракавать» արեցիք։

Բարեպաշտ, տարիքաւոր այրի Տ. Աննա Կարապետեան Հայր-Բաբամեան հրաժեշտի ողջոյն տալու համար կայարան գալով 'ի միջի այլոց արեց հետևեալ բարեմաղթութիւնը. Տ. Հ. Աստուած յաջողութիւն տայ, գնացէք. բայց եթէ վերադառնալու ըլլաք, դարձեալ կընդունենք ձեզ...

Մելիտոպոլի խաղաղ համայնքի մէջ՝ կան Խալիպեան ուսումնաւարտներ, որոնք վատ վերաբերուած չեն դէպի մեզ։

Մեծարգոյ Արութեան, այնքան լուրջ էր նայում օտարութեան մէջ գտնուած քահանայիս դրութեան, որ քանիցս ինքը անձամբ բերել է իր հաւաքած ռոճիկը (պարոնը Խալիպեան սանեբից է)։

Առանձին համակրանքով էր վերաբերուում դէպի նուաստս և տեղւոյն ժողովրդեան բարերար՝ Մեծապատիւ պ. Գէորգ աղա Խարա-Մըրզա։

Ժողովրդի յարգանքն այնտեղ հասաւ, որ նոքա տօնախմբութեանս օրը, նուէրներով պատուեցին ինձ։

Երբէք մոռանալու չենք Մելիտոպոլի օրհնեալ ժողովրդի անկեղծ վերաբերմունքը դէպի մեզ. շատ անգամ նոքա յուսադրել և ամոքել են վշտերիս դառնութիւնն, օտարութեան մէջ։ Ուրեմն՝ ամօթ Դ.-ին, որ ծխական ժողովում, կրքից կուրացած, թոյլ է տուել ասել, որ տեղւոյն ժողովուրդը դժգոհ է եղել մեզնից, դորա համար էլ փոխադրուել ենք Լուգանսկ։ Մեր ասածներն ապացուցանելու համար գնում ենք այստեղ մեր նախկին ծխականներից մէկի՝ Աղէքսանդրապոլցի պ. Ենովք Հայր-Բաբամեանի նամակից մի փոքրիկ քաղուածք—

Բարեկրօն Ստեփաննոս քահանայի Պապայեան

Արժ. Տ. Հայր.

Զկարծեմ թէ, իմ նամակ չգրածս, դուք բացատրէք, որպէս թէ ձեզ մոռացած լինիմ. ոչ, ամենևին ոչ. թէ ես և թէ մեր ընտանիքը, բոլորը ձեզ հաճութեամբ յիշում են։ Յիշում է ձեզ և կարելի է ասել, այստեղի բոլոր հայ հասարակութիւնն և այլն։

Թող ներէ մեզ ազնիւ ընթերցողը, որ մենք, մի վատ սիրտ անձի պատճառով, թոյլ տուինք մեզ համեստութեան շրջանից ելնել. ներողութիւն, հազար ներողութիւն։ Սակայն, դառնանք բուն խնդրին։

Մելիտոպոլից գալով Լուգանսկ, հասարակական գործերը գտանք ողբալի դրութեան մէջ։ Աղօթատունը, որ մի փոքրիկ շինութիւն է՝ ուրիշի սեփականութիւն, չկայ քահանայի բնակարան, ծխական ուսումնարան։ Ժողովուրդը միմեանցից անջատուած, թշնամի, միով բանիւ՝ կատարեալ բաբելոնեան խառնակութիւն։ Իմ նախորդը՝ Հերթևցեան քահանան, որը խիստ վարպետ է ուրիշներին ցեխոտելու մրոտելու և որի վարմունքի շնորհիւ ստիպուած եղանք բրօշիւրս հրատարակել, իր հնգամեայ պաշտօնավարութեան ընթացքում, «եռանդով գործելով» շատ բան է արել, բայց ոչինչ չէ արել, գոնէ չէ կարողացել Աղօթատան հարցը վերջացնել։ Ահա այր «գործունեայ» և «եռանդուն» քահանայի տեղիցս հեռանալուց յետոյ՝ մեզ վիճակուեց նրա «սկսածը» շարունակել։ 1905 թ. Սեպ. ամսին, հոգաբարձական ընտրութեան համար առաջին ծխական ժողով ունեցանք. ժողովը բազմամարդ էր. Տէր Աստուած, այդ ի՞նչ ժողով էր. գործակալ եղածս ժամանակ մենք տեսել ենք գիւղական ժողով, «բահ ու բրիչով» (Կարսի գաւառում), բայց սա ուրիշ բան էր. մարդիկ, կարծես թէ հոգեկան «աֆֆեկտի» դագաթնակէտին էին հասել-այնպէս էին գոռում աղօթատան մէջ.

Теръ-Нерсесъ, Теръ-Нерсесъ (խօսակցութիւնը մեր ժողովներում ռուսերէն է)։

Բանից դուրս եկաւ, որ թէև ժողովուրդը հեռացրել էր «Կարագաշեանի» ներբողած Հերթևցեան քահ. բայց հանգստացած չէր, ալէկոծւում էր ինչպէս ծով, թէև «ֆրթունայ» առաջացնող քամին վաղուց արդէն չքացել էր։

Ժողովուրդը շարունակ բողոքելով Հերթևցեան քահանայի դէմ՝ յուսով է եղել, որ սրբազան Առաջնորդը իսկոյն և եթ կ՝պատժէ նրան, կհեռացնէ Լուգանսկից, բայց յուսախաբուելով, սկսել է դժգոհութեան նշաններ ցոյց տալ և սրբազան Առաջնորդի դէմ, որը իբրև վերին աստիճանի բարի անձնաւորութիւն, չէ կամեցել «զմահ մեղաւորին, այլ զդառնալն նորա 'ի չար ճանապարհէն և զկեալն»։ Ժողովրդից երկու անձինք՝ պ. Սալթիկով և պ. Գ. Քիրիշչեան Ն.

Նախիջևան գնալով՝ հանգ. Նահապետ եպիս. Նահապետեանի և փոխանորդ Մուշէ վարդ. ներկայութեամբ, աղաչում են սրբազան Առաջնորդից հեռացնել նրան։ Այսպէս է նկարագրում պ. Սալթիկով իր կատարած միսսիան.—«մինք „нахрапомъ лѣзли“ Սրբազան Հօր վրայ, մի ժամ աւել գալաճի արինք քահանայի պատճառով, բայց բան դուրս չէկաւ. իսկ Սրբազանն պատասխանել է.—որդիք մի քիչ համբերեցէք, երիտասարդ է, անփորձ է, դուցէ կուղղուի. վերջապէս ո՞ւր ուղարկեմ Լուգանսկի համար անպէտք համարուած քահանային. և այլն. ծխականները տեսնելով, որ սրբազան Առաջնորդը չէ կամենում միանգամից տապալել նրան, վճռում են ռոճիկ չտալ, որպէսզի այդ միջոցով կարողանան հեռացնել նրան և, 'ի հարկէ, հասնում են իրենց նպատակին։ Հերթևցեան քահանան բողոքում է սրբազան Առաջնորդին՝ ժողովրդի այդ վարմունքի դէմ և պահանջում է իրեն հասանելիք ռոճիկը, այդպիսի հիման վրայ թեմական իշխանութիւնը հրամայում է երեց. Պօղոս Աջեմեանին՝ եկեղ. գումարից տալ քահ. ռոճիկը. ահա այդտեղից է սկիզբն առնում ժողովրդի և երեցփոխի թշնամութիւնը։ Ինչպէս ընթերցողը ծանօթացած կլինի «Կարագաշեանի» անպատկառ գրութիւնից-պամֆլետից և պարբերական մամուլի մէջ (Մշակ) լոյս տեսած խայտառակ

գրութիւններից Հերթևցեան քահ. երախտապարտ գտնուեց դէպի իրեն ձեռնադրող և պաշտպանող սրբազան Առաջնորդը։ Սակայն հարցից չհեռանանք։ Առաջին ծխական ժողովում, ծխականները բուռն բողոք յայտնեցին և երեցփոխ Աջեմեանի դէմ նրա՝ Հերթևցեան քահ. ցոյց տուած պաշտպանութեան համար՝ ընդդէմ ժողովրդեան. ամենքը միաձայն գոչում էին, որ շնորհիւ նրա թուլութեան «կարմիր խաչի» և այլ գումարները ծախսուել են անկօնտրոլ կերպով, բայց, 'ի պատիւ ժողովրդեան պիտի նկատել, որ ոչոք պ. Աջեմեանի դրամական հաւատարմութեան մասին չէր կասկածում. ճիշտն ասած՝ անկեղծ կերպով հաւատում էի Աջեմեանի հաւատարմութեան, դորա համար էլ բոլոր ծխական ժողովներում պաշտպանում էի նրան՝ շարժելով շատերի դրժգոհութիւնն իմ դէմ։ Ժողովուրդը, վրէժխնդրութեամբ լցուած պահանջում էր քննութիւն՝ Հերթևցեան քահ. հանգանակած և «ուղարկած» 292 ր. և 1903 թուին Մայր Աթոռի կալուածները գրաւած ժամանակ իբրև նպաստ հանգանակուած 400 ր. մասին։

Ժողովրդի արդար պահանջն անիրագործելի թողնել չէր կարելի. ծուխը պահանջում էր հարց տալ այդ չարաբաստիկ 292 ր. մասին, թուղթ գրուեց թեմական իշխանութեան. պատասխանը քացաստական էր. ահա այդտեղից սկիզբն առաւ

«կարմիր-խաչի» համար հաւաքուած փողի քննութիւնը։

Այստեղ մենք կանգ ենք առնում «Մ. Կարագաշեանի» առաջին սուտն հրապարակ հանելու նպատակաւ։ «Մ. Կարագաշեան» ինձ անամօթ կերպով հայհոյելուց յետոյ շարում է հետևեալ գոհարները—«զանգակների փողը,» կարմիր-խաչին յատկացնելուն դէմ է եղել Հերթևցեանը, բայց զիջել է ժողովրդի պահանջին և այլն.» որպիսի՜ անամօթ և եղջիւրաւոր սուտ։ Հապա ի՞նչ է ասում Հերթևցեանի «Призывъ-ը, որի տակ ամենից առաջ ինքն է ստորագրել. ահա այդ թուղթը.—

Призывъ.

„Сборъ въ пользу краснаго креста далъ «вчера сумму 100 р. 90. к. не честь нашему «о-ву въ такое тяжелое время, являться съ «100 рублями, а потому не плохо было-бы «собранныя для молитв. дома на колокола день-«ги надобность въ коихъ миновала!! доложить на вчера собранную въ пользу креста сумму. «Желающіе должны подписаться о согласій. «Я согласенъ, свящ. Нерсесъ.

Ամսաթիւ. Տարեթիւ չկայ։ Հետևում է 29 ստորագրութիւն։

Ըստ որինի, Հերթևցեան քահ. իրաւունք չունէր թղթի տակ ստորագրելու նախ՝ որ այդ փողը ինքը տուած չէր և երկրորդ՝ դորանով ճնշում է գործ դրել մնացած ծխականների վրայ։

Երբ քննութեան ժամանակ պ. Սալթիկովից հարցրինք թէ ինչո՞ւ դուք ստորագրել էք թղթի տակ «съ наслажденіемъ согласенъ», այն ի՞նչ հիմա բողոքում էք, նա պատասխանեց—... «ինադու» ձեռք քաշեցի, թէև հակառակ էի, բացի այդ՝ մատնութիւնից վախեցայ...։ Ծիծաղելին, թէ ցաւալին այն է, որ փողը «կարմիր-խաչին» յատկացնելու համաձայնութիւն են տուել այնպիսի անձինք, որոնք մի կոպէկ նուիրած չեն և մինչև օրս էլ սև գրոշ տուած չեն եկեղեցուն։

Ուրեմն սուտ է, որ թղթին ստորագրել են նուիրատուները. թուղթը ստորագրած է ոչ թէ կանոնաւոր ծխական ժողովում, այլ՝ բազարում։

„Призывъ“-ի տակ 20 մարդ փողոցներում ստորագրել տալուց յետոյ՝ Հերթևցեան ք. այսպիսի խորհրդաւոր մակագրութիւն է արել.-«11-ն «փետրվարի ես, պ. Ց. Թումասեան ըստ համա-«ձայնութեան մեր ժողովրդեան բացարձակ մե-«ծամասնութեան այսօր տուեցինք մեր մօտի հաւաքած «192» ր. զանգերի փողը յօգուտ կարմիր խաչի ընկերութեան (Տարեթիւ չկայ։)

Ներսէս ք. Հերթևցեան

Յակոբ Թումասեան։

«Призывъ»-ի մասին ստեր թխելուց յետոյ «Մ. Կարագաշ». մեծ ապլոմբով շարունակում է. «իսկ այսօր, 4 տարուայ այդ գործը, որ իւր «բոլոր կողմերով վերապահուած է Լուգանսկի Հայ հասարակութեան, յետին նպատակով դառ- «նում է թեմական առաջնորդի իրաւասութեան «ինդիր։ Տ Ներսէս քահ. Հերթևցեան ղրկած «է այդ գումարը իր նպատակին և կամ ոչ՝ այդ «հարցով պիտի զբաղուէին նուիրատուները, որ- «պէս իրենց սեփհական տուրք. իսկ փոքր ի «շատէ... (այստեղ գործածուած է մի խուլի- «գանական դարձուածք, որ ամաչում եմ մէջ «բերել) առաջնորդը անպայման պիտի իրեն «հեռու պահէր քաղաքացիական և քրէական «գործերում խառնուելու միտումից, յարելով, որ «դա մարմնաւոր իշխանութեան գործ է։»

Տեսնում էք, ընթերցող, ինչպէս են սար- քում պատմութիւնը. ի՞նչ անուն տանք դորան. անամօթութիւն, անբարեխղճութիւն, թէ խաչա- գողութիւն։

1904 թուականի սկիզբներում Հերթևցեան քահ. «ուղարկել» է 292 ր. հիւանդ և վիրաւոր ռուս զօրքերի ընտանեաց օգտին. իսկ մենք գործ ենք սկսել 1905 թ. եթէ ձեր յանցաւոր ուղեղին մի քիչ զօռ տաք, պ. մատեմատիկոս՝ կտեսնէք, որ մի տարի էլ հազիւ է անցել։

«Մ. Կարագաշի» կարծիքով սրբազան Ա- ռաջնորդը իրաւունք չունի քաղաքացիական գոր- ծերում խառնուելու, որովհետև այդ մարմնաւոր իշխանութեան գործ է. որպիսի հրաշալի տրամա- բանութիւն... Օրէնսգէտ «Կարագաշի» կարծի- քով կլանուած փողի համար մենք հարց պի- տի տայինք ոչ թէ թեմիս առաջնորդին կամ կոնսիստորին, այլ участковый приставъ-ին։

Ժողովրդականք պահանջում են քահանա- յից՝ հարց տալ սրբազանին 292 ր. մասին. քահ. պաշտօնապէս հարցնում է թեմական Առաջնոր- դից հանգանակուած փողի մասին, իսկ սրբա- զան Առաջնորդը պիտի լռէ, որովհետև այդ «մարմնաւոր» իշխանութեան գործ է. բացի այդ՝ «Կարագաշեան» չէ կամենում, որ այդ մասին զրաղրութիւն բացուի...

Աւելի լաւ չէր լինի, եթէ Հերթևցեան քահ. փոխանակ դիպլոմատի խաղեր խաղալու մեր գլ- խին, հէնց առաջին պահանջի ժամանակ ներկա- յացնէր չարաբաստիկ «անդորրագիրը», որով թէ ինքը կաղատուէր և թէ մեզ աւելորդ գլխացաւից կազատէր։ Բայց չեղած բանը ինչպէս պիտի ներկայացնէր. այդ գաղտնիքը գուցէ գիտէ Կա- բագաշ։

Նախկին երեցփոխ Աջեմեանի ասելով՝ քա- նիցս պահանջել է «անդորրագիրը» Հերթևցեան

քահ. բայց վերջինս տուած չէ, առարկելով, որ այդ ժողովրդեան չէ վերաբերում։ Վերջապէս ինչ իրաւունքով Ներսէս քահ. պահում է իր մօտ ժողովրդական փողի կվիտանցիան։ Ինչու այդ բանը գործերի մէջ չէ թողնում, տեղից հեռանալու ժամանակ։

Հրէական ջարդերի ժամանակ տեղւոյս քաղաքային վարչութիւնն, հրաւիրելով մեզ ժողովի, խնդրեց ժողովարարութիւն անել հայերի մէջ։ Փողը ժողովեցինք տուինք քաղաքագլխին, իսկ կվիտանցիան պահեցինք գործերի մէջ (1905 թ. 30 նոյեմբ. № 5)

Կիշնևի «կարմիր-խաչի» ընկերութեան նախագահ՝ պ Սինադինո, դիմելով սրբազան Առաջնորդին խնդրում է թեմում ժողովարարութիւն բանալ. Առաջնորդը, 1904 թ. փետրուարի 14-ին № 61 գրութեամբ, պատուիրում է երեցփոխին դրամ ժողովել՝ ուղարկելով կոնսիստորի կնքով վաւերացրած ստորագրութեան թերթ։

Հաւաքած փողը փոխանակ կոնսիստոր ուղարկելու, «ուղարկում» են Եկատերինոսլաւի նահանգապետին, չմոռանալով սրբազան Առաջնորդին խաբել՝ կեղծ յայտարարութեամբ, ինչպէս վերջը կտեսնէ ընթերցողը։ Անշուշտ ս. Առաջնորդը հարց պիտի տար հանգանակած փողի մասին, եթէ երեց. Աջեմեան Ներսէս քահ. թելադրութեամբ չմոլորեցնէր Հայոց առաջնորդին և չգրէր, որ փողը յանձնուած է Լուգանսկի քաղաքագլխին։ Պանֆլետիստ «Կարագաշի» ասելով՝ Քիշնևի Հոգևոր Ատեանն դաշն է կապել մի շարք հոգևորականների հետ՝ «անզուգական» գործիչին տապալելու համար. դէհ, ազնիւ ընթերցող, ի՞նչ կասէք դորան. դօնկիշոտութիւն, թէ ուրիշ բան. ողբանք, թէ ծիծաղենք այդ գիւտի վրայ։

Դաշն կապել Հերթևցեան քահ. տապալելու համար...

Ինչ կարիք կար դաշն կապելու, քանի որ նրա բազմազան սխրագործութիւնները վաղուց դաշն էին կապել նրա դէմ։ Ասացէք, խնդրեմ, ինչ մի մեծ բաւականութիւն էր մեզ համար, մի այսպիսի ծանր ժամանակ, օտարութեան մէջ, զբաղուել Հերթևցեան քահանայովնրան վնասելու նպատակով. վերջապէս ի՞նչ էր արել այդ մարդը մեզ, որ մենք նրան վնասելու ձգտէինք։ Ժողովուրդն է պահանջել, ժողովուրդն է խնդրել «կարմիր-խաչի» մասին քննութիւն կատարել։ Մենք բոլորովին տեղեկութիւն չունէինք հանգանակուած փողի մասին, որովհետև աղօթատանս գործերի մէջ ոչինչ չկար։

Մեր ասածներն ապացուցանելու համար՝ կբերենք հետևեալ քաղուածքը.—

4 Նոյեմբերի 1905 թ. Արժանապատիւ Տէր Ստեփան-
Քիշնև— նոս Հայր.

«Հերթևցեանի հասցրած վիրաւորանքը՝ մեր

միշտ ներողամիտ և անպայման բարեսիրտ Սրբազան Հօրը, այնքան խորն է և ծանր, որ դըժուար է բուժել, եթէ ոչ անհնարին... այդ բանը անշուշտ զգում էք ինքներդ. մենք էլ մըտածում ենք նրա ընտանեկան դրութեան մասին և ցանկանում ենք մի կերպ կարեկից լինել։

Յարգանօք՝ Կարապետ Օհանջանեան.
(Ատենադպիր կոնսիստորի)

Ահա թէ ինչպէս ենք դաշն կապել հոգևոր իշխանութեան հետ՝ հերթեւցեանին վնասելու համար։ Եթէ մենք վնասելու ցանկութիւն ունենայինք, արդեօք նամակ կը գրէինք և կինդրէինք մասնաւոր կերպով՝ ներողամիտ վերաբերուել դէպի նա, 'ի նկատի ունենալով նրա ընտանեկան դրութիւնը։

Ինչպէս վերը յիշեցի, ժողովրդի որոշումից յետոյ անմիջապէս դիմեցինք վիճակային կոնսիստոր և հարց տուինք հանգանակած փողի մասին։ Ստացանք հետևեալ գրութիւնը.—

Ը. 209

է 27 յունվարի 1906 ամի է Քէնդ-

Բարեկրօն Ստեփաննոս քինյի Պապայեան Աղօթատան Հայոց Լուսանցի

Առ յայտարարութիւն Ձեր ի 19 ամսոյս թ. 10 վիճ. կոնսիստորիայս այսու տայ գիտել բարեկրօնութեան Ձերում թէ՝ յօգուտ ռուսական «կարմիր խաչի» ընկերութեան 'ի ժամանակի

չէ մատուցեալ Սմին կամ յանուն ս. առաջնորդի թեմիս դրամ ինչ, իսկ երեց. պ. Աճեմեանցն պահելով առ ինքեան զվաւերական թերթ հանգանակութեան դրամոց՝ յայտարարութեամբ 'ի 22 Փետրվարի 1904 ամի թ. 7 տուեալ էր գիտել նորին բարձր Սրբազնութեան թէ՝ զհանգանակութիւն դրամոց յօգուտ հիւանդ և վիրաւոր զինուորաց 'ի ծայրագոյն արևելս՝ արարեալ է յաղօթատան պ. քաղաքացուն տեղւոյդ զկնի պատշաճաւոր ատենաբանութեան Ներսէս քահանայի։

«Այր վան և պատուիրէ Ձեզ 'ի յայտ ածել թէ ուր առաքեալ են զհանգանակեալ յօգուտ կարմիր խաչի դրամն, և զհետևանացն ծանուցանել կոնսիստորիայիս։

Կոնսիստորի թուղթը ստանալուց յետոյ՝ բացատրութիւն ենք պահանջում երեց. Աջեմեանից իր տուած յայտար. մասին. նա պատասխանում է։—«Ես բան չիտիմ. գալաւային աղօթատուն եկածն ալ, Տ. Ներսէսին քարոզն ալ. փետրվարին ես հիւանդ էի.» Ստիպուած եղանք Աջեմեանի յայտարարութիւնը պահանջել կոնսիստորից։

Ահա՝ յայտար. պատճէնը.

1004
308/6

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI. 1922
ԱՄԵՆԻԱ, Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Տ. Թեմակալին Հայոց Նոր Նախիջևանի և Բեսարաբիոյ Գերապատիւ Տէր Ներսէս Արքեպիսկոպոսին

Լուգանսկի Հայոց աղօթատան երեցփոխից.

«Ստանալով Տ. Սրբազանիդ 61 թ. հրա-
«մանը ռուս եպիսկոպական պատերազմի հի-
«ւանդների համար կամաւոր հանգանակութիւն
«բանալու: Բայց պատիւ ունիմ յայտնելու Ս.
«Հօրդ, որ երբ ձեր հեռագիրն ստացուեց թագա-
«ւորին համար մոլեբին կատարելու, մոլեբնի
«վերջը, մեր ծխատէր Ներսէս քահանան քարոզ
«խօսեց և այդ ժամին մեր քաղաքացիները մեր
«աղօթատունին մէջ ներկայ էր: Բոլորից յետոյ
«հաւաքուեց 292 ր. և քաղաքացիի «գիտութեամբ»
«դրկուեց 'ի կատարումն: 'Ի գիտութիւն սրբա-
«զան Տիրոջդ յայտնելով այս աւելացնում եմ,
«որ այժմ, ամէն օր այստեղ թէ շոր և թէ փող
«է հաւաքւում թէ պ. Քուշնարեանի մօտ և թէ
ինձ մօտ քաղաքացիի ձեռներէցութեամբ:

Երեցփոխ՝ Պօղոս Աջեմեան

1904 թ. 22 Փետրվար
Լուգանսկ, № 7

Պ. երեցփոխը յայտարար. կարդալուց յետոյ
մնաց շշմած, ալայլուեց և խիստ վրդովուեց.
«զայիր Տ Ներսէսին հաւատացած գրել եմ.—ա-
«սաց նա.—ախպար, ինչպէս չհաւատաս, քահա-
«նայ է ու:

Տ. Հայր. ասա пожалуйста. Ինչ բան է ձեռներէցութիւն. инициатива. ասում եմ ես. առաջին անգամն եմ լսում այդ «խուջուր» խօսքը. Ինչ կասէք, ընթերցող, ձեռներէցութիւն բառը փրկեց Աջեմեանին և ապացուցեց, որ այդ յայտարարութիւնը կազմուած է Հերթևցեան քահ. ձեռամբ...

Լուգանսկի քաղաքագլխի պատասխանը.—

копія

Съ возвращеніемъ запроса этаго имѣю честь сообщить Вашему Высокоблагословенію, что навести въ дѣлахъ управы точную справку о поступленій отъ свящ. Нерсеса Эртевцянъ въ 1904 г. денегъ въ пользу раненныхъ воиновъ на дальнемъ Востокѣ не представляется возможности т. к. всѣ счеты по такимъ поступленіямъ передан ымѣстному комитету краснаго креста, по книгамъ же управы означенныя деньги на приходѣ не значится. февр. 6 дня 1906 г.

Городской голова С. Лутовиновъ

Քաղաքագլխի բացասական պատասխանը ստանալուց յետոյ ժողովրդի հետաքրքրութիւնն իր գագաթնակէտին հասաւ. ամենքից շատ հետաքրքրուած էին՝ Մանուշակով Պետրոս Սարգիս և Եղիա Կուշնարեաններ, Կ. Պողով, Սալթիկով և Գ. Քիրիշչեան, որոնք անդադար խնդրում էին հասցնել գործի վերջնական կէտին:

Զկամենալով գործին միանգամից սուր կերպարանք տալ՝ նախապէս պաշտօնական գրութեամբ դիմում ենք Թէոդոսիա՝ Հերթևցեան քահանային և ուղարկելով բոլոր գրութիւնների պատճէնները՝ բացատրութիւն պահանջում։

Հերթ. քահ. պաշտօնական թղթերիս պատասխանում է մասնաւոր նամակով և, ի միջի այլոց, աւելորդ չէ համարում մի քանի «խորհուրդներ» տալ մեզ եղբայրաբար...

Հերթևցեան քահ. նամակի պատճէնը

31 Մարտ 1906 թ.

Թէոդոսիա Հայր Ստեփաննոս

Երեկի ստացայ Ձեր № 54 գրութիւնը՝ վիճակիս կոնսիստորի № 207 և № 325 գրութեանց պատճէնների հետ։

Յիշեալ գրութեանց հետ էր նաև № 9112 հեռագրի պատճէնը յանուն նոր երեցփոխիդ—Զախիրեանի։

Առ'ի միամտութիւն Ձեր՝ շտապում եմ հաղորդելու, որ 292 թ. ուղարկւած է կարմիրխաչի ընկերութեան հեռաւոր արևելք գնացող Եկատերինօսլաւեան նահանգի զինուորների ընտանեաց, ոչ թէ Թեմիս Սրբազան առաջնորդի միջոցով, այլ թէ Եկատերինօսլաւի նահանգապետի անուամբ։

Գալով այն խնդրին, թէ ինչու Սրբազան հօր անուամբ չղրկեցի յիշեալ գումարը՝ այլ

նահանգապետի, չնայած որ ես ուզում էի սկզբից Ս. Հօր անուամբ ղրկել, բայց երբ խօսքը տարածւեց, որ գումարը պիտի ղրկւի քաղաքագլխին և քաղաքագլուխն էլ գիտէր այս. ուստի ես ծխականներիս ցուցակով 292 ր. ուղարկեցի Եկատերինօսլաւ—նահանգապետին կէսը յատկացնելու կարմիր խաչի օգտին՝ կէսն էլ բաժանելու նահանգի զինուոր տարւածների թշւառ ընտանեաց։ Ահա ձեզ 292 թ. ամբողջ պատմութիւնը։

'Ի նկատի ունեցէք, որ 192 ր., որ զանգի համար էր հաւաքւել Թորոսեան Դանիէլի տունը, իմ առաջարկութեամբ, երբէք և ոչ մի մատեան մտած չէ եղել։ Ուստի դուք իզուր էք այդ կոնսիստորիայի խնդիր դարձրել։ Եթէ մատեան մտած լինէր, միթէ՞ ես թոյլտւութիւն չէի խնդրելու Տ. թեմակալից և կամ միթէ՞ հոգաբարձութիւնը թոյլ կտար ինձ, կամ ով էլ որ լինէր՝ այդ եկեղեցական գումարը առնէր առանց օրինաւոր դիմումների։ Եթէ ձեզ հասկացրել են, որ մատեան մտած է այդ գումարը այդ սխալ է։ Մատեանները յանձնողական երկու թղթով մինը ինձ՝ պատճէնը Աճեմեանի մօտ, բոլոր պաշտօնական թղթերով երիցս հաշուառութեամբ տւել իմ պ. Աճեմեանին։ Բարի եղէք դիտելու մատեանները։ Ես զատկից յետոյ անպատճառ կգամ Լուգանսկ, որ հօրս գերեզմանի կարգա-

ւորութեան գործ կայ, կբերեմ ինձ հետ բոլոր թղթերը և պօստի квитанція և դուք հանգիստ կլինէք։ Ընդունեցէք բարև։ «Նոր-դարում» երբեմն կարդում եմ լուրեր Լուգանսկից, դրա մասին յետոյ կխօսենք։

Աղօթակից՝ Ն. Ք. Հերթնցեան.

Վերոյիշեալ նամակից ոչ մի բաւարարութիւն չստանալով՝ երկրորդ գրութեամբ խնդրում եմ շուտով ուղարկել փոստի անդորրագիրը և միանգամայն վերջ տալ այդ ոչ ցանկալի գրագրութեան։ Ի պատասխան իմ գրութեան, Հերթ. քահ. կվիտանցիան փոստով ուղարկելու մասին բան չէ գրում, այլ գրում է միայն «ոտքով-գլխով» կորած հանգանակութեան ժապաւինեալ մատեանի մասին. այդ մատեանը ոչ գործերի մէջ կար և ոչ էլ կոնսիստորում. Սաճեմեանի ասելով՝ Հերթ. քահ. Թէոդոսիա գալուց 2 շաբաթ առաջ վերցրել է իրենից և «ստուգելու» պատրուակաւ կոնսիստոր ղրկել։

Երկրորդ նամակ.

17. Ապրիլ 1906 Ք. Բարեկրօն Տէր
Թէոդոսիա. Հայր!

Եթէ ձեր խօսքը հոգաբարձական ժողովարարութեան մատեանի մասին է, այդ մատեանը մինչև 2500 ր. գումարը իր տոկոսեօք փոխադարձ վարկի ընկերութիւնից յետ ստանալը՝ հոգաբարձութեան նախագահ պ. Ե. Կուշնարեանի մօտն էր, ինչպէս նաև հոգ. կնիքը։ Մի գուցէ

ձեր ցանկացած մատեանը հոգաբարձական կազմը յանձնել է իր անդամ քահանայ Մաքսիմաճեանին, որին բազմիցս պաշտօնական թղթերն ուղարկում էին կարգաւորելու։

Մի գուցէ նրա մօտ լինի։

Իսկ մնացեալ մատեանների և թղթերի մասին՝ ես ունիմ յանձնողական թերթ Սաճեմեանից, որի պատճէնը այդ պարոնի մօտն է։ Ուստի բարի եղէք կարդալու պատճէնը։

(Յանձնողական թղթի մէջ ժապ. մատեանը գրուած չէր)

Շատ մխիթարական եմ համարում ձեր բռնած դիրքը։ Ես տուժեցի Լուգանսկում, որովհետև գնահատող չեղաւ. մի թերթ կապրիդ և ահա զոհը համարւում է խեղճ քահանան։

Դուք մի շտապէք Լուգանսկում։ Առանց ժողովարարութեան մատեանի և գործի տեղիդ պարոնները եթէ կամին՝ ամէն ինչ վերջացած է. և մանաւանդ այժմ, ով այդ կերպ գործի համար փող կտայ, աչքի առաջ ունենալով Լուգանսկի հարուստներին։ Ուրեմն դուք տակաւին կանգ առէք, թող դրանք կենդրոնանան։

Ձեր մասին ես լրիւ տեղեկութիւն ունեցայ Հայր Կիւրեղից (Կիւրեղ վարդ. Կիւրեղեան, նախկին փոխանորդ Կարսի). ուրեմն մեր ցանկում կխնդրենք իւր ժամանակին և ձեզ՝ քահանայական մասնաժողովի հրաւէրով։

Ես արդէն պատրաստուել էի գալու Լուգանսկ, որ ստացայ հեռագիր Էջմիածնից, թէ Բաբգէն վարդապետը գալիս է քննիչ՝ փոխանակ Սառիկեանի, ուստի ես պիտի սպասեմ։ Յոյս ունիմ, որ մեր տեղական գործերը մի որոշ ուղղութիւն կստանան, այնուհետև անմիջապէս կը գամ առ ձեզ։

Խնդրում եմ պահել այն թուղթը, որին դուք Возваніе թէ Призывъ անունն էիք դրել. ես կուզէի այդ թուղթը տեսնել։

Ողջ լինել ցանկալով, մնամ յարգանօք՝

Ներսէս ք. Հերթևցեան։

Ճիշտն ասած՝ Հերթևցեան քահանայի նամակները ստանալուց յետոյ՝ ես խորապէս համոզուեցի, որ նա փողը ուղարկել է ըստ պատկանելոյն և մինչև անգամ ուրախացայ՝ նրա այդ փորձանքից ազատուելու համար. բայց, արի ու տես, որ ծխականները Հերթևցեան քահ. «քեօռ» բախտից չէին հաւատում նրա նամակներին և շարունակ պնդում էին որ ես «գուբեռնատորէն» հարցնեմ։

Ահա նահանգական վարչութեան երկու գրութիւնները—

МИНИСТЕРСТВО
внутреннихъ дѣлъ
Канцелярія
Екатеринославскаго
Губернатора
Столъ 4.
Мая 8 дня 1906 г.
№ 5872
Г. Екатеринославъ.

Срочно.

Настоятелю Луганскаго Армянскаго Молитвеннаго дома.

Вслѣдствіе отношенія отъ 28 истекшаго апрѣля за № 71, Канцелярія Губернатора увѣдомляетъ, что 292 руб. пожертвованные Луганскимъ армянскимъ обществомъ въ комитетъ Краснаго Креста, въ канцелярію въ февралѣ 1904 года не поступали.

Необходимо имѣть свѣдѣнія, когда, какъ, куда и за какимъ № были отосланы деньги.

Управляющій Канцеляріей (подпись не разб.)
Помощникъ Правителя Канцеляріи (подпись не разб.)

Іюня 6 дня 1906 года
№ 7035.
Г. Екатеринославъ.

Наст. Луг. Арм. молитв. д.

Вслѣдствіе отношенія отъ 27 минувшаго мая за № 81 Канцелярія Губернатора *вторично* увѣдомляетъ, что 292 р. пожертвованные Луг. Армянскимъ обществомъ въ пользу Краснаго Креста въ Канцелярію съ начала 1904 г. не поступали.

Управляющій Канцеляріей (подпись)
Помощникъ Правителя Канц. (подпись)

Իւրաքանչիւր մարդ, որ բռնուած չէ գոռոզութեան և պարծենկոտութեան ախտով, պիտի գիտնայ, որ միայն ինքը չէ հասկացողը, ուրիշներն էլ մի բան հասկանում են. բայց Հերթեցեան քահանան, ինչպէս երևում է, ինքն իր վերայ սիրահարուած լինելով՝ իբրև մեծամիտ մարդ, այլ կերպ է մտածում։

Նա ուզեց ճարպիկութեամբ խաղեր խաղալ մի շարք մարդկանց գլխին, բայց չարաչար սխալուեց իր հաշուի մէջ։

Երբ Հերթ քահ. տեսաւ իր սրածի անկանոնութիւնը, պիտի զղջար. պիտի ասէր՝ որ ես Լուգանսկում նիւթական ծանր պայմանների մէջ գտնուելով (Ներսէս քահ. Լուգանսկում նիւթական նեղ դրութեան մէջ է եղել), ծախսել եմ այդ փողը, բայց ատիճանաբար կաշխատեմ հատուցանել։

Ես կարող էի համոզել ժողովրդին, ժամանակաւորապէս կանգ առնել, չշարունակել գործը, 'ի նկատի ունենալով այն հանգամանքը, որից ստիպուած ծախսել է 292 ր. բայց Հերթ. քահ. քաջութիւն չունեցաւ խոստովանելու իր սխալը, ինչպէս վայել է ամէն մի օրինաւոր մարդուն, այլ ընդհակառակը աշխատեց իր պաշտօնական «բացատրութիւններով» մոլորեցնել մինչև անգամ վեհափառ Հայրապետի դիւանապետին՝ կամենալով գրածներս ստել, բայց նրա

բռնած քաղաքականութիւնը տապալուեց ճշմարտութեան առաջ՝ մերկապարանոց անելով Հերթեցեան քահանային...

Ահա այդ ժամանակները Թէոդոսիա է գալիս Հերթ. քահանայի գործերը քննելու՝ Սինոդի անդամ բարձրապատիւ Բաբգէն վարդապետը, որին դիմելով խնդրում ենք հարց տալ Ներսէս քահանային 292 ր. մասին. քննիչին ուղարկել էի նահանգ. վարչութեան 2 գրութիւնները։

Ստանում եմ Հայր քննիչից հետևեալ նամակը՝ Ներսէս քահանայի տուած բացատրութեան հետ։

Արժանապատիւ Ստեփաննոս քահանայ Պապայեան.

Ձեր 5 յուլիսի տարեւոյս № 99 գրութեան կարող եմ պատասխանել, որ Ներսէս քահ. Հերթեցեանն ինձ չէ յանձնել 292 ր. փոստի անդորրագիրը, և թէ նա ձեր անունով գրած նամակի մէջ, որի պատճէնն ուղարկել էիք ինձ, գրում է թէ «կոնսիստորիայն դիմել էր քննիչին, ուստի և քննիչը պահանջեց ինձանից՝ ես էլ իսկոյն տուեցի նրան. միանգամայն սուտ է. ոչ կոնսիստորիայն այդ մասին ինձ գրել է և ոչ էլ նա ինձ 292 ր. փոստի անդորրագիր է տուել։

Երբ ես Թէոդոսիայում Հերթ. քահ. գործը քննելիս պահանջեցի այդ 292 ռուբլին՝ նա ինձ ուղարկեց իր բացատրութիւնը, որի պատճէնն ուղարկում եմ ձեզ վաւերացրած։ Այդ բացա-

տրութիւնից՝ իր ասելով երևում է որ նա ուղարկել է նահանգապետին, մինչդեռ նահանգական վարչութեան թղթից այդ չի երևում, որ նա իսկապէս ուղարկել է այդ գումարը։

1906, Հոգևոր քննիչ և Սինոդի անդամ
24 փետրվարի Բարգէն վարդապետ.
Ս. Էջմիածին։

ՊԱՏՃԷՆ

Հոգևոր քննիչ գործոյս Տէր Բարգէն վարդապետի Անդամի Սինոդի Ս. Էջմիածնի

Տեղեկութիւն

Ձեր № 16 գրութեան պատասխանելով, այսու շնորհ ունիմ յայտնելու Ձեզ Բենիկ վարդապետի յարուցած!! Լուգանսկի 292 ր. մասին հետևեալը։ Նախ՝ 292 ր. Լուգանսկի աղօթատան գումարից չէ, ինչպէս յայտնում է վարդապետ Բենիկ։ Ճշտելու համար ասելիքս՝ խնդրեմ մանրամասն տեղեկութիւն առնել Լուգանսկի Հայ ժողովրդից և եկեղեցւոյ մատեաններից։

Երկրորդ՝ 192 ր., որ ես հաւաքել էի, դեռ 100 ր. առաջ աղօթատան զանգակներ գնելու ֆոնդ՝ և որը դրած էր Յակովբ Թովմասեանի մօտ, յիշեալ պարոնից առնուեց և միացուեց կարմիր խաչի համար գումարածս 100 ր. հետ՝ 192 ր. նուէր բերող երկսեռ անձանց-առանձին առանձին հաճութեամբ և արձանագրական թերթով, որը այժմ Լուգանսկումն է և դեռ պահ-

ւում է գործերի մէջ, ինչպէս գրում է ինձ այժմեան Լուգանսկի ծխատէր Ստեփաննոս քահ. Պապայեան։ Երկրորդ՝ 292 ռուբլին ես ղրկել եմ փոխանակ կարմիր խաչի ընկերութեան յանձնաժողովին, այլ թէ 1903 թ. դեկտեմբերի 23-ին № 96 փոստի անդորրագրով Եկատերինօսլաւ յանուն պ. Նահանգապետի, դուրս գալով 2 ր. ծախք փոխադրութեան բաժանելու Սլաւիանո-Սերբեան գաւառի (Լուգ. գաւառ) հեռաւոր արևելք տարած զինուորների կարօտ ընտանեաց բաժանելու։ Եւ պէտք է աւելացնել, որ այս վերջի որոշումը եղած է Լուգանսկի պ. քաղաքագլխի խորհրդով։ «Որքան յիշում եմ». մեր այս նուէրի մասին տպագրուեց որոշ տեղեկութիւն «Южный край» թերթում և ժողովրդին յայտնի լինելով, իսկ պահանջ չէ եղել հաշուառութեան այնպէս, ինչպէս Կովկասի աղէտեալների համար ղրկած նպաստներիս նկատմամբ։ Շնորհ ունիմ աւելացնելու նաև այն, որ 292 ր. խնդրից առանձին «յարուցած» է նաև մի ինչ որ ժապաւինեալ մատեանի խնդիր, որը կորսուած է։

Իսկ որ ես 1904 թ. դեկ. 14-ին Լուգանսկում յանձնել եմ 1900 թ. ց.-1904 եկեղ. հաշուեմատեանները, կայից և գոյից մատեանը՝ և հոգաբարձական կնիքը՝ իր ժամանակի երեց. Պօղոս Ահեմեանին, այդ իսկ առթիւ ունիմ յանձ-

նողական թերթ երեց. Ահեմեանի ստորագրութեամբ վաւերացրած և որի պատճէնը գտնվում է հէնց իրեն՝ Ահեմեանի մօտ։

Յուսալով, որ դուք սորանով կբաւականանաք, խոնարհաբար խնդրում եմ ձեզ այս աւթիւ գործ չսկսել ինձ բացարձակ զրպարտող Բենիկ վարդապետին պատասխանատուութեան կոչելու համար, կարճել այս գործը Սինօդում, ես արդէն աշխարհիկ դատաւորներին եմ դիմել, ինչպէս ձեզ յայտնի Բենիկ վարդ. պատասխանատուութեան ենթարկելու քրէական օրինաց յօդ. 1535 որ յաղագս զրպարտութեան»։

Թէոդոսիալի հայոց ծխատէր՝ Ներսէս քան. Հերթեցեան

№ 31

1906 Ք. 2 յունիս

Թէոդոսիա։

Իսկականի հետ համեմատ է որի համար և վաւերացնում եմ ստորագրութեամբ և անուանական կնքով.

20 օգոստոսի, 1906 թ.Ս. Էջմիածին

Անդամ Սինօդի և հոգևոր քննիչ՝

Բարդէն վարդապետ։

Ահա ձեզ, ընթերցող, Կարագաշ-Հերթեցեան քահանայի «բացատրութիւնը»։ Մարդը չէ կարող առանց բոմբիւնի խօսել, համեստ կերպով։ Բացատրութիւնից երևում է, որ Հերթեցեան քահ. արդէն աշխարհիկ դատաւորներին է դիմել՝ «բանսարկու» Բենիկ վարդ. 1535 յօդ. հիման

վրայ պատասխանատուութեան կոչելու. պակաս չի լինիլ, ուղիղ 1535 յօդուածի հիման վրայ. մարդը յօդուածն էլ է դրել, որպէս զի... բարձրացրած փոշին աւելի թանձր լինի։ Որքան մեզ յայտնի է, Բենիկ վարդ. ցարդ ստացած չէ դատախազի կոչնագիրը, թէև արդէն ժամանակը անցաւ. քանի որ դիմելու չէք «աշխարհիկ դատաւորներին» և դիմելու էլ իրաւունք չունիք, ինչո՞ւ էք դատարկ տակառի նման աղմուկ հանում։

Ինչո՞ւ պիտի Բենիկ վարդ. դատի կոչէք. ի՞նչ յանցանք է գործել մարդը. «կարմիր խաչի» փողի գործն է «յարուցել» ըստ Կարագաշ-Հերթեցեանի։

Բայց Տ. Հայր, ե՞րբ պիտի դուք թողնէք բառախաղերը, Եզովպոսի լեզուն և խօսէք հասարակ մահկանացուներիս հասկանալի լեզուով։ 1905 թուականի վերջերին յարուցուել է այդ չարաբաստիկ հարցը՝ Լուզանսկի ժողովրդի կողմից. որտեղ էր այդ ժամանակ Բենիկ վարդ. երբ է եկել նա Նոր-Նախիջևանի թեմը. մոռացել էք, մի՞թէ կարելի է այդ աստիճան անբարեխիղճ լինել։

Այլ առակ լուսարուք։ Հերթեցեան շարունակում է իւր բացատրութիւնը այսպէս.—«192 ը. զանգակների ֆոնդը մատեան մտած չէ, Թովմասեանի մօտն է եղել.» շատ բարի, դիցուք թէ

մատեան մտած չէ. բայց այդ խօ չենն հարցնում ձեզ. ձեզնից հարցնում են «ուղարկած» փողի կվիտանցիան, իսկ դուք ասում էք՝ «փողերը մատեան մտած չէ.» այդ գիւտը մենք առանց ձեզ էլ գիտենք։

292 ր.—ասում է Հերթեւցեան, ուղարկել եմ 1903 թուին դեկտեմբերի 23, № 96 փոստի անդորրագրով Եկատերինոսլաւի նահանգապետին, Հեռաւոր Արեւելք գնացած ռուս զօրքի թշուառ ընտանեաց օգտին... Երանի՜ հաւատացելոց...

Ռուս-ճապոնական պատերազմը սկսուել է 1904 թ. յունուարի 27 ին, իսկ Հերթեւցեան քահ. նպաստը ուղարկել է 1903 թ. դեկ. 23-ին, որովհետև ադմիրալ Տոգոյից նամակ էր ստացել, գիտէր, որ Եապոնացիք Զեմուլպո նաւահանգստում պիտի յարձակուին ռուսաց նաւատորմիղի վրայ. դորա համար էլ վաղուց ուղարկել է նպաստը։ 1904 թուին, փետրվարի 11-ին, Թովմասեանի ժօտ եղած 292 ր. ստացել է և իր սեպհական ձեռքով իր կազմած «Призывъ» ի տակ ստորագրել է, իսկ փողը ուղարկել է 1903 թ. դեկ. 23-ին. կարծեմ բաւական է։

Եթէ Հերթեւցեան քահանան մի քիչ յարգէր իր հետ գործ ունեցող անձանց և ընդունէր, որ միայն ինքը չէ բան հասկացողը, այն ժամանակ այսպիսի ամօթաբեր հակասութիւնների մէջ չէր ընկնիլ։

Սակայն, այդ ինչ «կվիտանցիա» է, որ ցոյց է տալիս Հերթեւցեան, գոյութիւն ունի՞, կա՞յ, թէ մտացածին բան է. այո, կայ, բայց «կարմիր խաչի» փողի կվիտանցիան չէ։ Համար 96 կվիտանցիայի պատճէնը, քննիչ Բաբդէն վարդապետին ներկայացնելուց յետոյ՝ Ներսէս քահ. պաշտպանները Հովիւ Թերթի մէջ գրեցին, որ իրենք «աչքով» տեսել են կվիտանցիան և պընդում են, որ փողը ուղարկուած է նահանգապետին։

«Հովուի» մէջ զետեղուած «հերքումն» կարդալուց յետոյ՝ մենք իսկոյն դիմեցինք տեղւոյս փոստատան պ. կառավարչին և ներկայացնելով անդորրագրի պատճէնը, տեղեկութիւն պահանջեցինք նրանից, ուղարկած փողի առթիւ։

Փոստի կառավարիչը, № 3030, 26 սեպ. 1906 թ. գրութեամբ տեղեկացնում է մեզ, որ 1903 և 1904 թուի մատեանները ուղարկուած են Եկատերինոսլաւի «կոնտրոլնի պալատ» (контрольная палата)։

Անմիջապէս դիմում ենք «կոնտրոլնի պալատ» և ստանում հետևեալ պատասխանը.—

Справка. Переводъ на 289 руб. на имя Екатеринославскаго Губернатора по подавательской книгѣ Ф. № 1-а Луганской почтово-телеграфной конторы 23 декабря 1903 года, записаннымъ не значится; въ статьѣ-же № 96

того же 23 декабря записанъ переводъ по почтѣ на „26“ руб. въ Кишиневъ на имя Архіепископа Нерсеса.

За счетнаго чиновника Капцикъ

Настоящую переписку со справкою Екатеринославская Контрольная палата имѣеть честь возвратить Настоятелю Луганскаго Армянскаго молитвеннаго дома, Славяносербскаго уѣзда. Октября 9 дня 1906 г. г. Екатеринославъ.

И. д. управляющаго палатою (подпись)

Младшій ревизоръ (подпись не разборчивая)

Ահա, յարգելի ընթերցող, մեր ձեռքով կատարուած՝ «կարմիր խաչի» գործի ամբողջ քննութեան պատմութիւնը։

Այժմ, անկողմնապահ ընթերցողը թող դատէ, կայ արդեօք այստեղ որևէ կեղծիք, անձնական հաշիւ, յետին մտքեր, ինչպէս ասում է Հերթեցեան-Կարագաշեան, իւր անխիղճ և ստայօդ «Զայն Ռուսիայից» գրքի մէջ։ Եթէ ընթերցողը կարդացել է «Զայն Ռուսիայից» պամֆլետը, բրօշիւրս կարդալուց յետոյ իրազեկ լինելով ճշմարտութեան, կ՚զայ այն եզրակացութեան, որ՝ մամուլի ազատութիւն, անձի անձեռնմխելիութիւն, անկողմնապահ քննադատութիւն գոչում են միայն այն մարդիկ, որոնք հէնց իրենք են ոտնակոխ անում ամեն մի ճշմարտութիւն՝ անդուռն բերանով հայհոյելով աջ ու ձախ և ի չարն գործ դնելով տպագրական խօսքի սրբութիւնն, իբրև գրչի աւազակներ։

Այն անձինք, որոնք ակամայից գործ են ունեցել Կարագաշեան-Հերթեցեան քահանայի հետ, դարձել են՝ խայտառակուած, անբարոյական, զրպարտիչ յետսամիտ, «անզուգական» գործիչին, ինչպէս ինքը իրեն անուանում է Հերթեցեան, ՀԱասելու տենչով բռնուած անձինք։

Աւելի շուտ, Հերթեցեան-Կարագաշեան նըման չէ մրոտ կաթսայի, որի հետ գործ ունեցողներն անպատճառ մրոտուում-ապականուում են...

Թեմակալ Առաջնորդ, հանգ. Նահապետ եպիս. Բաբգէն, Յուսիկ, Բենիկ վարդապետներ, նուաստս. բոլորն էլ կողմնապահ, ճշմարտութիւնն ատող, ՀԱասակար անձինք ենք, միայն Հերթեցեանն է մաքուր և անարատ որպէս բիւրեղ և իբրև «անմեղ զոհ» գալարուում է «անխիղճ» տանջողների ճիրաններում...

Որքան էլ որ դառնութեամբ լցուի մարդուս սիրտը՝ Հերթեցեան-Կարագաշի պամֆլետը կարդալիս, բայց այդ դառնութիւնը շուտ է անցնում, երբ մտածում ես, որ ոչ մի Մելքոն Կարագաշեան չկայ, գոյութիւն չունի, Կարագաշեանն ինքը Հերթեցեանն է. Հերթեցեանը ինքը հիւսել է իր կենսագրութիւնը, ինքը իր պատկերը զետեղել է գրքի առաջին երեսում, ինքը իրեն անուանել

է՝ «անզուգական գործիչ» «նշանաւոր քարոզիչ» «վաստակաւոր ուսուցիչ» Հարաւային Ռուսաստանում ճանապարհորդած (այդ էլ երևի մի արժանաւորութիւն է) և այլն։

Եւ ահա մի այսպիսի «անզուգական երիտասարդ» քահանայ, ապերախտաբար քշուել է Լուգանսկից և վերջն էլ Թէոդոսիայից, շնորհիւ... անբարեխիղճ հոգևոր քննիչների։

Հերթևցեան-Կարագաշեան, համարձակւում է ցեխ նետել և մեր անցեալ քահանայագործութեան վրայ՝ իր ընդաբոյս չար սովորութեան համաձայն։

Գիտէք, այդ որ թուականին էր. 1903 պատմական թուականը, երբ հալածական հայութեան գոյութիւնն էր վտանգուած, Հայոց ս. Եկեղեցին սգոյ շղարշով պատած, Միածնաէջ Մայր Աթոռը նշաւակ դարձած, արժանաւոր հոգևորականները հեռաւոր տեղեր աքսորուած, հայ եկեղեցւոյ հարազատ զաւակները բանտերում փակուած, անմահ հայ նահատակների վարդագոյն արեամբ՝ փողոցների սալայատակները ցողուած ժամանակներն էր...

Այդ ժամանակները, մենք, Կարսի վիճակի Անւոյ 15 հայ գիւղերի գործակալութեան պաշտօնն էինք վարում և ըստ չափու կարողութեան պաշտպանում էինք ազգային եկեղեցոյ շահերը։ Մենք, մեր եկեղեցով, շրջապատուած լինելով գնդապետ Լևիցկու և փոխ-գնդապետ Կիսիլեւվի 40 յոյն և թուրք ստրաժնիկներով, ըմբոստացանք ահեղ հրամանի առաջ, սեղմեցինք մեր կրծքին եկեղեցւոյ բանալիները և թոյլ չտուինք՝ Հայոց Հայրապետի հրամանն ոտնակոխ անել. մոռացանք տուն, տեղ, մայր, կին, զաւակներ և պատրաստուեցանք մեր կեանքը դնել հայրենիքի սեղանի վրայ, ոչինչ համարելով սպառնալիքները։ Մեր եկեղեցւոյ սրբազնագործ պաշտօնեաների վրայ թափուած անարգանքներին՝ յանդիմանութեամբ պատասխանեցինք, ծաղրին՝ ծաղրով, արհամարհանքին՝ արհամարհանքով։ Անւոյ գործակալութեան 15 հայ գիւղերի քահանաներից ոչ մէկը չյանձնեց եկեղեցիները, չնայելով սպառնալիքներին և ուղարկած շրջաբերականիս մարմնաւոր իշխանութեան ձեռքով գրաւուելուն։

Ահա այդ լաւագոյն, կեանքիս փառաւոր և անմոռանալի օրերի, ոգևորութեանս առարկայի վրայ է ցեխ նետում Հերթևցեան-Կարագաշեան. հեռու, հեռու, Կարագաշ, ոչ միայն մազերով սև, այլ և հոգով սև Կարագաշ. միք ցեխոտիլ մեր սրբութիւն-սրբոցը. այդ մենք չենք կարող ներել ձեզ... մենք վերջացրինք...

Ստեփաննոս քահանայ Պապայեան.

1907 թ. 11-ն օգոստոսի
է. ս. Լուսգանսկ

II

Մայր Աթոռի օգտին հանգանակուած 400 ր. գումարի առթիւ կատարուած քննութիւնը։

Երբ պարզուեց, որ Ն. Ք. Հերթևցեան իւրացրել է «կարմիր խաչի» համար հաւաքուած 292 ր. հոգաբարձութեան անդամները՝ Պետրոս Մանուշակով, Եղիա Կուշնարեան, Կարապետ Պոպով, Կիրիլ Սալթիկով, Գէորգ Քերիշչեան խնդրեցին մեզ մի ուրիշ հանգանակութեան մասին՝ 1903 թուին, կալուածները գրաւուած ժամանակ հաւաքուած փողի համար հարց տալ կոնսիստորին։

Համաձայն հոգաբարձութեան խնդրանաց դիմեցինք վիճակային կոնսիստոր և ստացանք հետևեալ պատասխանը.

Ն· Ն· Գ·
ՎԻՃԱԿԱՅԻՆ
Կոնսիստորիա
ՀԱՅՈՑ
ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ
ԵՒ
ԲԵՍԱՐԱԲԻՈՅ
Թ. 1034
Ի' 12 Յունիսի 1906 ամի.
Ի ՔԻՇՆԵՒ

Պատճէն

Բարեկրօն Ստեփանոս քահանայի Պապայեան՝ Լուգանսկ

Առ յայտարարութիւն ձեր 'ի 29 մայիսի տարւոյս թ. 83 վիճակային կոնսիստորիայս այսու պատուիրէ վասն հանգանակեալ դրամոց Հերթևցեան քահանայի յանուն Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի և ցուցակի նուիրատուաց, անյապաղ դիմել ուղղակի 'ի Դիւան վեհափառ Հայրապետի

ազգիս և զհետևանացն յայտ առնել կոնսիստորիայիս վասն տեղեկութեան։

Անդամ կոնսիստորիայի՝ Սարգիս ք. Թաթսիզեանց
Ատենադպիր՝ Կ. Յովհաննէսեան.

Վիճակային կոնսիստորի հրամանն ստանալուց յետոյ անմիջապէս դիմում ենք Վեհափառ Հայրապետի ազգախնամ դիւանին, որից ստանում ենք հետևեալ պատասխանը։

ԴԻՒԱՆ
Վեհափառ Կաթողիկոսի
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
Թ 1804
6 սեպ. 1906 ամի
Ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Ստեփաննոս քահանայի աղօթատան Լուգանսկի

Առ յայտարարութիւն Ձեր 'ի 26 յունիսի այսր ամի թ. 97, Դիւանս ըստ բարձու հրամանի նորին Վեհափառութեան յայտ առնէ եթէ յայտարարութեամբ Տ. Ներսէս արքեպիսկոպոսի ի 16 փետր. 1902 ամի թ. 37 ընկալեալ է 176 ր. հանգանակեալ ի ձեռն Ներսէս քահանայի 'ի Լուգանսկի հայոց, իսկ 200 ր. նուէր Աճեմեանի յանուն նորին Սրբութեան փոխանակագրաւ. իսկ որ ինչ զհանգանակադրամէ առաքելոյ 'ի 1903 ամի 23 նոյեմբերի, 'ի ձեռն Ներսէս քահանայի, որպէս գրէքդ 'ի յայտարարութեան Ձերում, առ այժմ չիք տեղեկութիւն ինչ։

Դիւանապետը, բացի այդ գրութիւնից, ուղարկում է նաև Հերթևցեան քահանայի «բացատրութիւնը», իսկ մեր տուած յայտարարութեան

վրայ՝ դնում է հետևեալ մակագրութիւնը.— «Ինչ հիման վրայ մեղադրում էք Հերթ. քահանան դրամական անհաւատարմութեան մէջ։

Դիւանապետի պահանջի համաձայն ուղարկուեցին այն փաստաթղթերը, որոնց հիման վրայ մեղադրւում էր Հերթ. քահանան դրամական անհաւատարմութեան մէջ։

Տեղւոյս աղօթատան հոգաբարձութեան յիշածս անդամները ներկայացրին մեզ մի ռուսերէն գրութիւն Հերթևցեանի ձեռամբ գրուած, որի հիման վրայ բացուեց քննութիւն, հարց տրուեց կոնսիստորին և դիւանին։

Ահա այդ գրութեան պատճէնը.—

23 Ноября. Достопочтенный
(թիւ չկայ) *Илья Алексѣевичъ*

Мы уже собирали! 340 рублей не хватитъ 60 р. я совѣтую Вамъ и даже прошу Васъ принять доброе участіе, ради добраго дѣла.

Если вы оогласны, то я могу написать Ваше имя и самъ платить 60 руб. чтобы ровно было 400. жду отвѣта.

Съ уваженіемъ къ Вамъ, Вашъ свящ. *Н. Ортевцянъ.*

Ուրեմն Հերթևցեան քահ. ժողովել է 340 ր. պակասում է 60 ր. դորա համար էլ նա երկրորդ անգամ դիմում է Ն. Կուշնարեանին և խնդրում

է քացի 50 ր.՝ թոյլ տալ ստորագրել դարձեալ 60 ռուբլի 'ի հաշիւ իր պարտքի Պ. Կուշնարեանին։

Վերոյիշեալ տոմսակից, որը չգիտենք ինչու առանց տարեթուի է, երևում է, որ Հերթ. քահանան շատ է շտապել հաւաքած փողը Մայր Աթոռին «հասցնելու», դորա համար էլ, շտապելով, ժամանակ չէ ունեցել հանգանակութեան թերթը Քուշնարեանին ուղարկելու, ինքն է ուզեցել նրա հաշուին ստորագրել և մինչև անգամ իր գրպանից Մայր Աթոռ ուղարկել...

Այժմ համբերութիւն ունեցէք կարդալու Հերթևցեան քահանայի «բացատրութիւնը»։

Ամենայն Հայոց ծայրագոյն պատրիարք Կաթուղիկոսի Դիւանի գերապատիւ տ. դիւանապետին

Բացատրութիւն

Առ յայտարարութիւն Ստեփաննոս քահանայի Պապայեանց Լուգանսկ քաղաքի, որ ի 5 սեպ. տարւոյս № 131 շնորհ ունիմ բացատրելու, որ յիշեալ քահանայ «արուցած» 400 ր. խնդիրը, որպէս թէ ես 1903 թ. նոյեմբեր ամսում 400 ր. եմ հաւաքել Լուգանսկի ծխականներից յօգուտ Ճեմարանի և կամ Ս. Էջմիածնի, որի պատճառաւ քահ. Պապայեան, խնդիր է յարուցել Դիւանից միջոցով ստուգել 400 ր. ստացման մասին. այդ նենգաւորութիւնը

կամ հանգանակութիւնը վերոյիշեալ նպատակներով տեղի չէ ունեցել, հետևապէս քահ. դիմումը առ Ձեզ, միանգամայն անտեղի է։

1903 թ. վերջին ամիսներում, Լուգանսկ մուտք գործող երկու երիտասարդք՝ Սեդրակ Մնջոյեան և Գրիգոր Ջալալեան՝ իմ միջամտութեամբ ձեռնամուխ եղան «առանին» եղանակաւ գումարելու մի որոշ գումար «տիրող» ցաւերի առաջը առնելու համար։ Նէիրատունների խոստացած դրամը դեռ չհաւաքած, ըստ ցուցակի՝ հասնում էր 300 ր. և մեզ թւում էր, որ եթէ Նէիրատունների ցանկում լինի յայտնի հարուստ Եղիա Քուշնարեանի անունը, խոստացողները անպայման կտան իրանց խոստացած գումարը։

Ուստի՝ յիշեալ անձանց խնդրանօք Եղիա Քուշնարեանին գրում եմ նամակ, որ այժմ Քիշնևի Առաջնորդի կողմից մտել է քննական գործում։

Քուշնարեան չհամաձայնեց և «որքան յիշում եմ» երիտասարդներիդ յաջողուեց 156 թէ՝ 180 ր. գումարել և այսպիսով էլ խնդիրը փակուեց։ «Հաւանական» է, որ հանգանակութեան ցուցակը լինի տեղացի երիտասարդների մօտ։

Ուստի ես գտնում եմ Պապայեան քահանայի դիմումը մի «յետին միտք» որը սերտ կապ ունի Քիշնևի կոնսիստորի ծառայողների

հետ։ Հետաքրքիր է գիտնալ, ինչո՞ւ քահ. Պապայեանն է գործի գլուխ անցել, մի գործի որը յայտնի է Լուգանսկի ամբողջ հայ հասարակութեան 1903 թ. իսկ։ Այլապէս եթէ կասկածելի մի գործ լինէր այն, իր ժամանակին պէտք է որ տարաձայնութեանց տեղիք տար, ոչ թէ հոգաբարձական մարմին կոչուած, «ընկերութեան» միջոցով, այլ ընդհանուր ծխականների։ Դորա համար խնդրում եմ Ձեզ, 'ի նկատի ունենալով Պապայեանի յայտնի ձգտումը և ըստ այնմ թողնել անհետևանք նրա դիմումը։

13 Սեպտ. 1906 թ. Ս. Էջմիածին.

Ն. Ք. Հերթեւցեան։

Հերթեւցեան քահ. խիստ է սիրում «յարուցանել» բառը և, ինչպէս երևում է, հասկանում է «յօրինել» կամ ինչպէս Թիֆլիսցին կասէ «մոգոնել» մտքով։

Տեղւոյս Աղօթատան պատ. հոգաբարձու պ. Ե. Կուշնարեանը, տալիս է մեզ նրա գրած նամակը իբրև փաստաթուղթ և հոգաբարձութեան հետ միասին խնդրում է հարց տալ այդ առթիւ և գիտնալ արդեօք այդ փողն էլ «կարմիր խաչի» փողի օրն է ընկել, թէ հասել է Մայր Աթոռ։ Իսկ Հերթեւցեան քահ. հեղինակաւոր ոճով ասում է—«Ստեփաննոս քահ. է «յարուցել»։ Որտեղից կարող էի ես յարուցանել, եթէ ինձ ձեր

թուղթը չտային, եթէ հոգաբարձութիւնը չըպահանջէր։

Փառք Աստուծոյ, ձեր հնգամեայ քահանայագործութեան ընթացքում եղած բոլոր հանգանակութիւնները այնպէս են կատարուած, որ աղօթատանս գործերի մէջ թղթի կտոր անգամ չկայ. այն ինչ կոպէկանոց գործերի պատճէնները կան։

Ինչպէս վերը յիշեցի, հոգաբարձուներն են խնդրել այդ առթիւ հարց տալ. բայց ինչ նշանակութիւն ունին «ժողովրդական» Հերթևցեանի համար, ժողովրդի ներկայացուցիչ հոգաբարձուները, քանի որ նոքա «ընկերութիւն» компанія, шайка են, ինչպէս անուանում է նրանց իր բացատրութեան մէջ Հերթևցեան։ Հերթևցեանի յիշած երիտասարդներից մէկը վախճանուել է, ինչպէս ասաց տեղացի «երիտասարդը», որի մօտ ոչ մի թուղթ չգտանք, իսկ «առանին» կերպով հաւաքած փողը՝ ուրիշ հանգանակութիւն է եղել, Մայր Աթոռի համար հաւաքուած փողից առանձին։

Հերթևցեանի ասելով, նա ստիպուած է եղել «սարքել» ռսերէն տոմսակը, որպէս զի աւելի հեշտ կարողանայ ստանալ Քուշնարեանի փողը... որպիսի անհեթեթ միտք։

Միթէ Քուշնարեանը պատկանում է այն անձանց թուին, որից միայն այսպիսի «օյինբազուութեամբ՝ ստակ կորզուի. սրանից աւելի մեծ վիրաւորանք չէ կարող լինել այդ մարդու համար։ Քուշնարեանը տեղւոյս ժողովրդի բարերարն է, որովհետև Պոպովեանների հետ միասին գնել է աղօթատանս շինութիւնը՝ ծախսելով մօտ 16000 ր. նրանից 50—100 ր. ստանալու համար, մանաւանդ Մայր Աթոռի օգտին 1903 թուին, երբէք կարիք չկար «кляузный» միջոցի դիմելու։

Հերթևցեան քահ. «գտնում է» իմ դիմումը անտեղի և «յետին մտքով», բացի այդ՝ սերտ կապ է «գտնում» իմ գործողութեան և կոնսիստորի ծառայողների մէջ, ուստի խնդրում է թողնել անհետևանք, ինչպէս իմ, նոյնպէս և ժողովրդի ներկայացուցիչ համարուող հոգաբարձութեան խնդիրը, որին նա ծաղրելով անուանում է «կոմպանիա»։

Հարկաւ, երբ Հերթ. քահ. «գտնում է» հոգաբարձութիւն կոչուող «ընկերութեան» դիմումն անտեղի, պիտի խնդրէ թողնել անհետևանք, ուրիշ ինչ պիտի ասէ, վերջապէս՝ արժէ միթէ այդ չնչին գումարի համար զբաղեցնել բազմազբաղ անդուգական գործիչին։

Ես յետսամիտ անձն եմ, ուզում եմ նրան վնասել կոնսիստորի ծառայողների հետ դաշն կապելով. բայց նա մոռացել է թէ ինչպէս էր դըբաատում ինձ իր նամակների մէջ և մինչև անգամ իր նախաձեռնութեամբ կայանալիք մաս-

նաժողովում ողորմածաբար աթոռ առաջարկում։

Այժմ, ընթերցողը թող լսէ պ. Քուշնարեանի և նախկին երեց. Ահեմեանի բացատրութիւնը և կազմէ իր անաչառ որոշումն։

ՊԱՏՃԷՆ

Բարեկրօն Ստեփաննոս քահանայ Պապայեանին.

Քաղաքիս նախկին քահ. Ն. Հերթեցեանը 1903 թ. կատարած եկեղեցական կալուածների գրաւման վերջ, աշնանային տօների մէկ պատարագին ազգու քարոզով յայտնելով ծխականներին այդ գրաւման հետևանքի մասին, նկարագրեց Ս. Էջմիածինը նիւթական շատ նեղ դրութեան մէջ և Ճեմարանը իբր թէ փակելու վրայ է։ Այս առթիւ և առաջարկեց ժողովրդին, ինչպէս ամէն հայաբնակ քաղաքներէն, նոյնպէս էլ Լուգանսկէն մէկ գումար մը հաւաքել և Վեհափառ Կաթուղիկոսի տրամադրութեանը յանձնել։

Որպէս զի չյետաձգւի ժողովարարութեան գործը Ն. ք. Հերթեցեանը երեցփոխ Պօղոս Ահեմեանի հետ շրջեց և հաւաքեց. ինձ մօտ ևս եկան և ես ստորագրեցի 50 ր. բայց որովհետև տօն օր էր և խանութս գոց էր, իսկ մօտս փող չկար, ես խնդրեցի միւս օրը գալ և փողն ստանալ։

Այստեղ պէտք է աւելացնեմ, որ Հերթեցեան քահ. ինձ պարտք ունէր մօտ 300 ր. ուս-

ոի և ցանկութիւն յայտնեց առանց պահանջելու նրանից, այդ իմ ստորագրած 50 ր. վճարել իր գրպանէն, որպէս զի իրեն ինձ պարտքը պակասի. ես 'ի հարկէ համաձայնուեցի։ Մի քանի օր անցնելուց յետոյ յանկարծ ստանում եմ Հերթեցեանից ռուսերէն գրած այդ յայտնի «записка»-ն, որով նա առաջարկում է ինձ երկրորդ անգամ թոյլ տալ իրեն, 'ի հաշիւ իրեն պարտքի այլ ևս ստորագրել 60 ր. որ ընդամենն հաւաքած յօգուտ Էջմիածնի գումարն հաւասարւէր 400 ր.

Այս տեսակ առաջարկութիւնը ինձ կասկածելի թւաց այն մտքով թէ՝ չլինի թէ նա փոխանակ Էջմիածնին օգնելու իր պարտքից միայն կուզէ ազատուել, ուստի և չհամաձայնուեցի, բայց իզուր, որովհետև այդ պարտքը մինչև օրս էլ մնացած է Հերթեցեանի վրայ։

Եղիա Կուշնարեան

1906 Ը. Սեպ. 26-ին
Լոֆանոկ.

Նախկին երեց. Պօղոս Ահեմեանի բացատրութիւնը.

Բարեկրօն տէր Ստեփաննոս քահ. Պապայեան

'Ի պատասխան Հայրութեանդ գրութեան պատիւ ունիմ բացատրելու, որ յիրաւի, 1903 թւին ես և Ներսէս քահ. Հերթեցեան շրջել ենք բոլոր ժողովրդի տները և խանութները և Մայր Ս. Աթոռի օգտին ժողովել ենք

մօտ 400 ր. իմ կողմից ես նուիրել եմ 25 ր. հաւաքած փողը տուել եմ մեր քահանային, որ ուղարկէ Ս. Էջմիածին. բայց ուղարկել է թէ ոչ՝ չգիտեմ։

Պօղոս Աճեմեան.

1906. Ը. 20 Սեպ.
Լո-ֆանսկ.

Եթէ ընթերցողը ուշադրութեամբ կարդայ երկու պատուաւոր անձանց՝ Քուշնարեանի և Աճեմեանի բացատրութիւնները, կնկատէ, որ ոչ մի հակասութիւն չկայ Հերթևցեան քահանայի տուած բացատրութեան մէջ։

Այդ էլ Մայր Աթոռի օգտին գումարուած 400 ր. պատմութիւնը։

III

Հերթևցեան-Կարագաշեան—Հրայրի մուտքը Լուգանսկ և «Նոր-Կեանք»-ի 27 համարում հայհոյական յօդուած զետեղելը։

Հերթևցեան քահ. չկարողանալով մարսել մեր ձեռքով կատարուած՝ «կարմիր խաչի» և Մայր Աթոռի օգտին հաւաքած փողի քննութեան գործը՝ Լուգանսկ «ժամանելով» իր հօր գերեզմանի շուրջը պարիսպ քաշելու պատրուակաւ * պատեց քաղաքիս քունջ ու պուճաղը և իր նման մարդկանց ստերի վրայ հիմնուելով՝ մի յօդուած

* Առանց պարիսպ քաշելու հեռացաւ։

թիւեց «Նոր-Կեանքի» համար՝ թաթախելով իր գրիչը սրտի մաղձի մէջ։

Որպէս զի իր թունալից յօդուածին տեղ տան՝ Հերթևցեան-Հրայր, տեղեկանալով Սարգիս Քուշնարեանին գրած՝ «Նոր-Կեանք»-ի խմբագ. նամակի բովանդակութեան, խաբում է վերջինիս, իբր թէ մենք Նոր-Կեանքի փոխարէն «Զարկ» ենք բերել տալիս։

Որքան հոգացողութիւն Հերթևցեանի կողմից դէպի Նոր-Կեանքը. մենք ունինք փաստաթուղթ, որի հիման վրայ կ'ապացուցանենք, որ Հերթ. Հրայր «Նոր-Կեանք»-ի դէմ պատրաստել էր մի յօդուած, «Նոր-Կեանք, թէ Սև Կեանք» վերնագրով և ուրիշ շատ յօդուածներ, որ մեր շնորհիւ չտպագրուեցին... վերջապէս ինչ մի յանցանք, եթէ մենք աշխատել ենք «Զարկ»-ը տարածել Լուգանսկում. ինքը չէր, որ սիրելի «Զարկ»-ի աշխարհգալը շնորհաւորեց Ստաւրապոլից և խոստացաւ տարածել։ Թէ որքան ենք մենք աշխատել «Զարկ»տարածելու համար, այդ երևում է նրանից, որ մեզնում ստացւում է 3 օրինակ «Զարկ». մէկը ստանում ենք մենք, միւսը՝ մեր սպասաւոր Ս. Ղանդիլեանը, երրորդը՝ Պօղոս Աճեմեան. ով պիտի կարդայ «տուսեցի-տանդալաղի» (կովկասցիների մականունը) «լուգուեով» դրած կազէթը. այդ Հերթ. Հրայրն էլ գիտէ, բայց ակամայ կուրանում է։

Որպէս զի ընթերցողները գաղափար կազմեն թէ ինչ աստիճան նեղսիրտ և վրէժխնդիր անձինք են «Նոր-Կեանք»-ի մտքի մշակները, մենք, ի չարն գործ դնելով ընթերցողների համբերութիւնը, կխօսենք այդ «բոյկոտի» մասին։

Անցեալ տարի Լուգանսկ է գալիս՝ Հին-Նախիջևանի գաւառի Ս. Կարապետ վանուց մի ինչ որ ուրարակիր տիրացու. այդ մարդը գալով մեզ մօտ, խօսակցութեան ժամանակ, իրաւունք է խնդրում այցելել տեղիս մի քանի հարուստներին. այդ այցելութեան հետևանքն այն է լինում, որ միւս օրը գալիս է մեզ Պոպովի առևտրական տան կառավարիչ Կիրիլ Եգորովիչ Սալտիկովը և ասում է մեզ, որ «իտա տիրացու թէ սարկաւագ, շատ նեղոֆկի պոլոժենիայի մէջ է ձգել Պոպովենց, ստակ կպահանջէ խիստ тайственнымъ образомъ, ձեռքները կուզէ պագնել և կասէ՝—«իմիս ինչ մարդ եղածս վերջը կգիտնաք, կոնդակ կստանաք, ես ինչ գիտեմ հազար շէշիդ բաներ пожалуйста, Տէր—բա՛, իդա՛ մարդուն մէկ բան արէք. եթէ ասօր բան չանիք, վաղը սհաթի 10-ին պիտի գայ 500 ր. ստանալու։ Իսկոյն և եթ կանչում ենք տիրացուին և հէնց Սալթիկովի ներկայութեամբ առաջարկում անմիջապէս հեռանալ քաղաքից. տիրացուն բացատրում է, որ այստեղ թիւրիմացութիւն է տեղի ունեցել. ինքը խնդրել է ճանապարհածախք

մինչև 50 ր. իսկ Պոպովեանները, չհասկանալով կարծել են, որ ես պահանջում եմ 500 ր. և այլն։ Տիրացուի կոյր բաղտից Լուգանսկումն են լինում մեր «տղերքը» որոնք Պետրոս Մանուշակովի և Գ. Քիրիշչեանի հետ գալիս են մեր բնակարանը և տիրացուին յանկարծակի բերելով՝ խուզարկում՝ նրա սուրճ վայելած բոպէին։ Տղերքը վճռում են տիրացուին տանել Պեատիգորսկ և տանում են։ Մի քանի օրից յետոյ, տիրացուն վերադառնալով իր «աքսորից» կրկին մտնում է Լուգանսկ և աւելորդ չէ համարում եկեղեցու բակը մտնել և մեր հասցէին մի քանի անվայել խօսքեր ուղղել, կարծելով, որ մենք ենք եղել նրան խուզարկել տուող. վերջը նա համոզուեց, որ խուզարկել տուողն եղել են ուրիշ մարդիկ և ներողութիւն խնդրեց։ Սահեփան Օթարեանի խանութում, յիշեալ տիրացուն, կամենալով վրէժխնդիր լինել Գ. Քիրիշչեանին յարձակւում է նրա վրայ ծեծելու նպատակաւ և վերջն էլ դուրս է գալիս փողոց ու բղաւում՝—«զօրոդովո՛ր, գօրոդովով, ինձ ուզում են ոպանել։» Խայտառակութիւնը կատարեալ էր։ Կամենալով մի կերպ վերջ դնել այդ անախորժ դէպքին, մենք Ս. Օթարեանի հետ հաւաքում ենք 40 ր. և առաջարկում տիրացուին թողնել մեր անհիւրընկալ Լուգանսկը։ Հա՛, մոռացայ յիշել, որ տիրացուն Պեատիգորսկից երկու բաց նամակ էր

գրել. մէկը՝ Պոպովեաններին, միւսը՝ Կուշնարեաններին և առանց այլևայլութեան երկուսին էլ վիրաւորել էր կոպիտ խօսքերով։ Տիրացուն Լուգանսկից գնում է Մոսկվա և բաւական ժամանակ այնտեղ մնալուց յետոյ, մի հեռագիր է տալիս Պոպովեանների վրայ, որով աւետում է, որ ինքը դարձեալ պիտի երջանկացնէ նոցա իր շնորհաբեր գալստեամբ։ Դարձեալ իրարանցում է ընկնում Պոպովեանների տան մէջ. նոյն Կիրիլ Սալթիկովը խնդրում է ինձ՝ հեռագիր տալ Մոսկվայի Արժ. Պոպովեան քահ. և խնդրել՝ յայտնել տիրացուին, որ Պոպովեանները չեն ցանկանում տեսնել նրան։ Տիրացուն չի գալիս։

Ահա այդ ժամանակները լոյս է տեսնում Գ. Քիրիշչեանի նամակը՝ տիրացուի մասին։ Տիրացուն էլ իր կողմից մի հերքում է գրել տալիս «Նոր-կեանքում», որով ուրանում է թէ իր արած անկարգութիւնները և թէ ժողովրդից ստացած 40 ր. ճանապարհածախքը (ստացել է Օթարեանի մօտ) և իմիջի այլոց յայտնում է, որ իրեն Պոպովեանների տուն ուղարկողը եղել է Օթարեանը։

Անպատասխան չէր կարելի թողնել այդ նամակը, ուստի մենք և Ս. Օթարեան ուղարկում ենք հերքում, բայց ճշմարտասէր «Նոր-կեանքը» չի տպագրում, իրեն յայտնի պատճառներով։ Ժողովրդի բանիմաց դասի բուռն զայրոյթը տեսնելով՝ բաց նամակով դիմում ենք երկրորդ անգամ և խնդրում տպագրել հերքումները և ի միջի այլոց յիշում ենք, որ ընթերցողները տեսնելով «Նոր-կեանք»-ի ակնյայտնի կողմնապահութիւնն կարող են նոր տարուց հրաժարուել թերթը ստանալուց։ Նոր-կեանք-ի «հմուտ դեկավարները» համարում են մեր կողմից եղած նախազգուշութիւնը «բոյկոտ» որովհետև նոր տարուց յետոյ մի քանի բաժանորդ պակասում են, ուստի վրէժխնդրութեամբ լցուած տեղ են տալիս Հերթևցեան-Հրայրի փողոցային նամակին՝ լցնելով թերթի էջերը լուացքի ջրով։ Հաւատացնում ենք յուսահատութիւնից գլուխը կորցրած «Նոր-կեանքին», որ մենք երբէք զբաղուած չենք «բոյկոտներ» սարքելով ։և եթէ մի բոպէ այսպիսի բան անէինք, ոչ մի համար «Նոր-կեանքի» չէր ստացուի Լուգանսկում։Ամօթ «Նոր-կեանք»ի խմբագրութեան, որ առանց ստուգելու իրողութիւնն, իր խելքին զօռ տալով, ենթադրութիւնների հիման վրայ՝ վիրաւորում է բոլորովին անմեղ մարդուն, ինչպէս երևում է «յառաջադէմ» Նոր-կեանքը» ուրիշ տեսակ է հասկանում անձի անձեռնմխելութիւնը։

Աւելորդ չենք համարում դնել այստեղ «Նոր-կեանք»-ի խմբագրութեան առ մեզ ուղղած նամակի պատճէնը.

Նոր-Նախիջևան, 31 մայիսի, 1906 թ.

Արժանապատիւ Ստեփաննոս քահանայ Պապայեան.

Ձեռնարկելով «Նոր-Կեանք» շաբաթաթերթի հրատարակութեան՝ սրանով խմբագրութիւնս խնդրում է Ձեզ աշխատակցել թերթիս, որի նպատակն է լուսաբանել և արծարծել հասարակական ու ազգային խնդիրներ և ձգտել ընդհանուր կապ հաստատելու Ռուսաստանի հայ գաղութների միջև։

Նոր-Կեանք-ը ունենալով առաջադէմ ուղղութիւն և լինելով ճշմարտութեան ջերմ պաշտպան, չպիտի պատկանէ որևէ կուսակցութեան։

Ի տ. խմբագրութեան

«Նոր-Կեանք» շաբաթաթերթի

Յ. Խարազօղեան.

Այժմ դառնանք Հերթևցեան-Հրայրի պրավոկատորական նամակին։ Հերթևցեան քահանան նայելով թէ ինչ ուղղութիւն դաւանող թերթի մէջ է գրում, ըստ այնմ և փոխում է իր հայեացքները... Նա այսօր եկեղեցու պաշտպան է, վաղը թունդ հակաեկեղեցական, նայած իր անձնական կրքերին։ Երբ հակակղերականի դիմակ է հագնում մի որևէ հոգևորականի հայհոյելու համար նա ասում է. «Հայ հոգևորականութիւնը իր պատմական անցեալի սև էջերն է կրում իր վրայ.» իսկ երբ հարկաւոր է իր անձնական փառասիրութեան և նիւթական օգտի համար մի բան

գտնել, նա ասում է՝ «Լուսոյ Խորան Մայր Աթոռ»։

Երբ «Զարկուած» է գրում. Աւետարանական «Ճշմարտութիւններ» է մէջ տեղ բերում (№ 6 1906 թ), իսկ երբ «Նոր Կեանքում»՝ ծաղրում է հոգևորականութիւնն ասելով—«վայ քեզ ժողովուրդ. երբ կղերի բուրվառի ծուխը պիտի բանայ քո առաջ, հանդերձեալ կեանքի երանաւէտ հորիզոնները»։ Այդ ինչ տիպ է, արժանաւոր մեծ Ներսէսների անարժան այլասերուած համանուն աշակերտը։ Նոյն ոճով է գրում Հերթևցեան, սոցիալ-դեմոկրատի ոճով, «Նոր-Կեանք»-ի 27 համարում ուր անխիղճ կերպով ծաղրում է քահանայական կոչումը՝ յանձին մեր։ Հերթևցեան-Հրայր «գտնում» է որ մենք խիստ ագահ ենք, որ ժողովուրդը, թէ այստեղ և թէ շրջակայքում մեզ չէ ընդունում. հոգաբարձութիւնը և երեցփոխը հրաժարուել են մեր պատճառով. Պոպովի նշանագրութեան առթիւ գնացել ենք Քիշնև ու վերադարձել լանջախաչով և ծաղկեայ փիլոնով։

Ի վերջոյ՝ Հերթ-Հրայր-«յայտարարում» է ի լուր Հայոց աշխարհի, որ ժողովուրդը համախոսական չէ տուել լանջախաչ ստանալու համար։

Պատասխան.—

Ա. Ժողովուրդը թէ այստեղ և թէ շրջակայքում ընդունել է և ընդունում է մեզ, որովհետև մենք ձեզ նման իրևկայի պարսկաստանցի

հայերին ասած չենք «քիւրդ կշինեմ ձեզ՝ անօրհնէքին փոքը վարձատրելու համար»։

Ընդհակառակը, մենք գնացած չենք մի քանի «նոր քիսայ» մարդկանց տունը՝ նոցա անքաղաքավարի վարմունքի պատճառաւ, բայց այդ մարդկանցից չորսը դարձել են այժմ՝ հասկանալով իրենց սխալը, իսկ երկու Չին-Նախիջևանի գիւղացիք յամառաբար շարունակում են իրենց ընթացքը. նոքա էլ, Աստուածային ողորմութեամբ կզղջան, որովհետև ճշմարտութիւնը միշտ յաղթող է։

Բ. Զախիրովը հրաժարուել է անցեալ տարի, իսկ տարւոյս մինչև յունիս ամիսը շարունակել իր պաշտօնը. նա հրաժարուել է նախ՝ մի բառ հայերէն չգիտնալու պատճառաւ և երկրորդ՝ մենակութեան։ Եթէ նա ուրիշ տեսակ է բացատրել ֆուրբոր հանելու համար, կը նշանակէ ճշմարտութեան բարեկամ չէ։ Հերթ. Հրայր իր սատայոդ յօդուածի մէջ մտցնելով Զախիրովի հրաժարականն, յետին մտքերով կամեցել է մեր կողմից մի քանի կարծիքներ դուրս քաշել Զախիրովի պաշտօնավարութեան առթիւ, յուսալով, որ մեր մերկացումներով կվիրաւորենք նրան և ապագայում անբաւականութեանց դուռ կբանանք. բայց այդ մենք դիտմամբ չենք անիլ, որպէս զի Հերթ. Հրայր չհասնէ իր նպատակին և մի քիչ հիասթափուի։

Գ. Աղօթատանս հոգաբարձութիւնը արձակուած էր Հերթեցեան քահանայի օրօք-նրա ձեռքով ընտրուած է հոգաբարձական կնիքը։ Հերթ. ասել է, որ հոգաբարձութիւն պէտք չէ, որովհետև շինելու գործ չկայ. մի երեցփոխն էլ բաւական է։ Հոգաբարձութիւնը ընտրուած է մեր օրօք. հոգ. Պետրոս Մանուշակովը մինչև օրս էլ հոգաբարձական պաշտօնի մէջ է. սուտ է, հրաժարուած չէ։ Անցեալ տարի նա ընտրուեց երեցփոխ, բայց իրաւունք չտուեց համախօսական գրել, մինչև որ ժողովուրդը չընդունէ իր պայմանները. նրա պայմաններն էին՝ կառուցանել ծխական ուսումնարանի և քահանայի համար շինութիւն. վերջացնել աղօթատան սեպհականատէր Քուշնարեանի հետ հաշիւները և այլն. ժողովուրդը չընդունեց. «ախպար, գեներալ-գուբերնատորսկի» պրաւաներ կպահանջէ իդա Մանուշակը, ասացին շատերը։

Սերեբրեակովը հաստատուած չէ եղել հոգաբարձական պաշտօնում, ուր մնաց որ հրաժարուէր. նա ընտրուած էր «բերանացի». փորձեց իբրև «նորընտիր» հոգաբարձու փող ժողովել մեզ հետ՝ ուսումնարանի համար, բայց միւս օրը հրաժարուեց, որովհետև պարոնի կարծիքով՝ «для этаго надо имѣть нахальство»։

Նրա կոյր բախտից Մ-ի խանութում ժողովարարութեան ժամանակ նստած էր նրա հա-

կառակորդը, որը զայրացնելու համար ասաց.— հաձէ, տուն ալ արթղ բանի մէջ մտիլ իս, քամիլամիշ էղիր հոսէն։ Պակասն էլ դորանով լրացաւ։ Սալթիկովը հրաժարուել է հոգաբարձութիւնից դեռ անցեալ տարի, այն պատճառով, ինչ պատճառով, նա 7 տարուայ ընթացքում շարունակ ընտրուել է ու հրաժարուել։

Այսօր Հերթ. Հրայր ափսոսում է Սալթիկովի հրաժարուելու առթիւ, բայց մոռացել է՝ նրա հոգաբարձու եղած ժամանակ իր գրած պաշտօնական թուղթը—կոպիտ վիրաւորանքներով, մոռացել է Սալթիկովին «участокъ» հրաւիրելը, մոռացել է ոստիկանութեան գրած թուղթը—попечителъ Салтыковъ укралъ попечительскія бумаги. այժմ կոկորդիլոսի արցունք է թափում։

Այո, Սալթիկովը հրաժարուել է վաղուց, բայց այդ հրաժարականից յետոյ՝ իմ հասցէին շատ գովեստներ է շռայլել...

Դ. Հերթ. Հրայրի ասելով մենք խիստ ագահ ենք. ո՞վ է ճառողը ագահութեան մասին—մարմնացեալ ագահութիւնն. Լուգանսկում չէ պատահել մի պսակ, որ Հերթևցեան քահանան մանրավաճառի սակարկութիւն չսկսէ. մոռացել էք Յ. Բ-ի պսակի ամօթաբեր դէպքը. մոզդոկցի Յ. Մ-ի փախուստը դէպի Ն. Նոր-Նախիջևան և «Դեբալցօվո» կայարանից ձեր հեռագրական խնդիրներով վերադառնալը. ձեր բարեկամ պ. Ա-ի հոգեւաւակի ամուսնութեան գործը. տիկին Ա. Փ-ի եղբօր մահուան համար թաղման վկայական տալու 25 ր. պահանջելը։

Երևակայեցէք, ընթերցող, Հերթ. քահ. այնքան ձգձգում է վկայական տալն և վերջը ի հարկէ չէ տալիս, որ Տ. Մելիքովան կորցնում է բանկում իր փողի տոկոսը—300 ր.

Ինչով կարող էք ապացուցանել մեր ագահութիւնը. կարո՞ղ է ժողովուրդը յիշել մի դէպք, որ մենք օրինակատարութեան ժամանակ սակարկութեան մէջ մտած լինենք, ինչպէս Հրայր։ Նրա համար ենք «ագահ» որ երկու տարուայ քահանայագործութեան ընթացքում, որքան մարդկանց ժողովարարութեան թերթ ենք տուել՝ ամենից առաջ մենք ենք ստորագրել, մինչև անգամ մեր կարողութիւնից աւել. այդ կվկայէ ամբողջ ժողովուրդը։

Ե. Հերթևցեանի ասելով՝ իբր թէ մեր նախագահութեամբ կայացած բոլոր ժողովները փակուել են առանց որոշ հետևանքի գալու, մեր անձնական շահերի!! պատճառաւ։

Դ-ն անարգանքներ է թափել մեզ վրայ, նկատողութիւններ է արել ծխական ժողովում և այլն։

Ոչ մի ժամանակ մեր պատճառով ժողով փակուած չէ. այդ կարելի է ստուգել արձանագրական թերթերով։ Մեր օրօք եղած բոլոր ժո-

ղովներում կարմիր թելի նման անցել է տեղւոյս աղօթատան քրօնիքական դարձած հարցը, որի պատճառով տեղի են ունեցել ժողովրդի մէջ մեծ անբաւականութիւններ. մի կողմից Քուշնարեանը պահանջել է ժողովրդի խոստացած գումարը, միւս կողմից՝ ժողովուրդը հակառակել է։

Պ. Քուշնարեան վերաւորուած համարելով իրեն, մինչև անգամ սպառնաց աղօթատունը գրաւ դնել, ուստի թեմիս Սրբազան Առաջնորդը մի ամսով փակեց աղօթատունը, մինչև որ ծխականք հատուցին իրենց խոստացածը։

Ինչպէս շատ բաների, նոյնպէս և այդ բանի մէջ խառն է եղել Հերթեցեանի մատը և նրա պատճառաւ էլ աղօթատան հարցը 7 տարի է շարունակուել. Հերթեցեան համոզել է միամիտ ժողովրդին, որ աղօթատան գլխին խաչ դրուած լինելու պատճառաւ՝ Քուշնարեան զրկուած է սեպհականութեան իրաւունքից. այդ ասել են մեզ պ. Քուշնարեան, Աճեմեան և այլք։

Մեր պատճառով են եղել ժողովում «դալմաղալներ» ասում է Հերթ. Հրայր. մի թէ. հապա ինչու մինչև օրս այդ մասին ոչինչ լսած չենք ժողովրդից, կամ ինչու ժողովուրդը բողոքած չէ Հոգ. իշխանութեան մեր բռնած «հակաժողովրդական» ընթացքի առթիւ, ինչպէս բողոքել է ձեր արարմունքների առթիւ. այսօր կոնսիստորում ահագին արխիւ է կազմուել Լուսանակից և Թէոդոսիայից գնացած բողոքներից։

Դ.-ն անարգանքներ է թափել յուլիսի 8-ին ժողովում-մեծ բան է արել. Դ-ն հին Նախիջևանի Խալխալ գիւղացի Հազարապետ Դանիէլեանն է, որ դառն աղքատութիւնից յանկարծ հարստանալով՝ իրեն՝ «Իրան-Թուրանի - Հնդու-Բուխարայի», ինչպէս ասում են աշուղները, բռնապետ է երևակայում. առաջին, որ նա անարգանքներ չէ թափել և երկրորդ՝ եթէ թափէր՝ կստանար իր բաժինը, որովհետև նրա առաջ խեղճ ու կրակ մարդ նստած չէր.

Ահա դէպքի իսկական նկարագրութիւնը։

Յուլիսի 8-ին ժողովում, ուր պիտի վճռուէր աղօթատան հարցը և ընտրուէր երեցփոխ, ժողովի օրինական թիւը պակաս լինելու պատճառաւ, մինչև ժողովի բացուելն, խօսում էին «Դէսից - դէնից». Հազ. Դանիէլեանը խօսում էր շմէնդէֆէրի (Հերթեցեանի սիրած գործի) մասին։ Գիտնալով, որ պ. Քուշնարեանը, մինչև ժողովի վերջը սպասելու չէ, ինչպէս սովորաբար անում է, մենք կամենում ենք նախապէս զեկուցանել մեր խօսակցութիւնն տեղւոյս նօտարիուսի հետ և յայտնել որքան ապառիկ է մնում ժողովրդի վրայ և այլն։

Որովհետև մեր զեկուցումից պիտի երևար ով է տուել աղօթ. պարտքը և ով չէ տուել, դորա համար էլ տեղից թռչում է Հերթեցեանի յիշած Դ-ն և ասում է մօտաւորապէս հետևեա-

լը.— «մենք ուրեմն, էկես էնք երեցփոխ ընտրելու, ուրեմն առաջարկես եմ տէրտէրի առաջարկութիւնը հալա թողնել։»

Ինչու՞, ինչու, տխպար, թող ասէ տէր բան որքան ստակ է թափ եղել, նօտարիուսը ինչ է ասել, նկատում է պ. Յակովբ Թովմասեան. նրա հետ միանում են բոլոր ծխականները և տեղն ու տեղն համաձայնութիւն առնում պ. Քուշնարեանից։ Ժողովը բացուած ժամանակ Դ-ն դարձեալ ուզում է բաներ յօրինել. բայց երբ տեսնում է, որ չէ յաջողւում, բարկացած հեռանում է։

Միւս օրը մեզ յայտնում են, որ Հ. Դ-ն սպառնում է չտալ իրենցից հասանելիք 400 ր., որպէս զի փորձէ թէ՝ ինչպէս կարող ենք մենք աղօթատան հարցը վերջացնել առանց այդ գումարի։ Այդ առթիւ մենք տեսնուումենք պ. Քուշնարեանի հետ և տեղեկանում, որ մի երկու մարդու չտալու դէպքում նա աղօթ. հարցը չէ թողնելու առկախ դրութեան մէջ, մանաւանդ որ տեսնում է մեր քաշած նեղութիւնները. պարոնի այդ աղնիւ վարմունքից դրդուած՝ մենք յայտարարում ենք, որ պարտքը չտուող անձինք ծխականների ցուցակից կհանուեն. մի քանի օրից յետոյ՝ Դ-ն. հաստատանում է իրենից հասանելիք գումարն. իր փեսաների հետ։ Ժողովում պատահել են կռիւներ, դարմանալու ոչինչ չկայ.

հայի ժողովը առանց կռուի չէ կարող լինել. վերջապէս ինչ մեղաւոր է քահանան, երբ նոյն իսկ եկեղեցում թոյլ են տալիս իրենց անլուր հայհոյանքներ, մի շարք անկարգ մարդիկ։ Ինչ մեղաւոր է քահանան, երբ հայի մէկը Աստուծոյ տաճարում իր հակառակորդին ասում է...
собаки вы этакія, осабачились...

Զ. Հերթ. Կարագ. Հրայրին դիւր չէ գալիս, որ մենք վարձատրուած ենք լանչախաչովև ծաղկեայ փիլոնով. որքան նշանակութիւն ունի ձեր կարծիքը մեր վարձատրութեան վերաբերմամբ։

Ինչ ենք արել մենք, որ վարձատրութեան ենք արժանացել. ոչինչ. ձեր իսկական պատկերը ենք դուրս բերել, լուսանկարչական ճշտութեամբ. այդ փոքր բան է։

Դուք էք աղօթատան հարցը, երկու տարի արիւն-քրտինք թափելով ազգային սեփականութիւն դարձրել. դուք էք Փափազեան կտակի գործը (10,000 ր. արժողութեամբ շինութիւններ) դատի յանձնել, մաշելով պրօկուրօրի, քննիչի, ոստիկանութեան և փաստաբանների դռները. ձեր քահանայագործութեան օրօք է եկեղեցու գումարն աւելացել, ձեր քահանայագործութեան ընթացքումն է աղօթատան բակում 18 սաժէն խորութեամբ «հաբէշական» ջրհոր փորուել, ձեր ժամանակումն է ուսումնարանական պիտոյքներ պատրաստուել (պ. Աճեմեանն

նուիրել էր Ուսումնարանի համար նստարաններ, Հերթեցեան ծախել, փողը կերել է)։

Դուք էք 1905 թուին, Մելիտոպոլում, երեցփոխի հետ միասին ներկայացել Տաւրիկեան նահանգ. պ. Տրեպովին և, նկարագրելով եկեղեցու ու ուսումնարանի ողբալի դրութիւնը՝ խնդրել միջնորդել Մելիտ. եկեղ. կալուածները վերադարձնել, որպիսի խնդրանաց հիման վրայ՝ նահանգապետը միջնորդել է ներքին գործոց նախարար պ. Բուլիգինի առաջ և յայտնել է, որ հայոց եկեղ. կալուածները գրաւելով վնասւում են ոչ միայն Մելիտոպոլի հասարակական հիմնարկութիւնները այլ և Տաւրիկեան նահանգի բոլոր հայկական եկեղեցիները և ուսումնարանները։

Պ. Նահանգապետի թուղթը մենք կարդացել ենք անձամբ, երբ գնացել էինք Սիմֆերոպոլ, գործի մասին տեղեկութիւն ստանալու։ Իսկ դուք ինչու համար էք ստացել լանջախաչ. ձեզ համար ով է միջնորդել։ 1903 թուին դուք էք պաշտպանել ազգային եկեղեցու շահերը՝ կրծքներդ դէմ տուած գնդակներին... Հերթ. Հրայր. «յայտարարում» է... Լուգանսկի ժողովրդի անկոչ փաստաբանը, այն փաստաբանը, որ ահագին «տուր ու դմբոցով» ինչպէս ասում են, տեղիցս հեռանալուց յետոյ՝ երես ունեցաւ դարձեալ գալու ու «այցելելու» այն մարդկանց, որոնք

տարիների ընթացքում անքուն դիշերներ անցնելով՝ հազիւ կարողացել են ազատուել իրենից, ամեն տեսակ միջոց գործ դնելով։

Նախ քան յօդուածս վերջանալն, յիշենք այստեղ Հերթեցեանի վերջին սխրագործութիւնը Լուգանսկում, որպէս զի ամենայն ինչ կատարեալ լինի։

Անցեալ տարի, աշնանային ամիսներում, բանտարկւում է մի երիտասարդ՝ Մինաս Հայրապետեան, տաճկահպատակ, որը մանկական հասակից ապրել է Աղէքսանդրապոլում, տեղւոյն Մարտիրոս աւագ քահ. Տ. Պողոսեանի հովանաւորութեան տակ, իսկ մի քանի տարի առաջ եկել է Լուգանսկ, նախ սպասաւորել է տեղւոյս աղօթատան մէջ ու ապա մտել ծառայութեան մանուֆակտուրի խանութի բաւարար ռոճկով։

Հերթ. գալով տեղս՝ իմանում է այդ և տեսնուելով երիտասարդի հետ բանտում վերցնում է նրանից 150 ր. «ազատելու» ծախք և մի քանի օրից յետոյ գնում է Տագանրօգ ու այնտեղից պահանջում 300 ր. գործի համար։ Թշուառ երիտասարդը, կարծելով, որ մի բան պիտի շինէ, իրաւունք է տալիս փոխադրել իր վերջին կոպէկը Հերթեցեանի անուամբ, բայց ի հարկէ «սարը ծնում է մուկ»։ Հերթ. գնում է այնտեղից Ստաւրապոլ և այնտեղից դարձեալ

պահանջում 400 թէ 300 Օդեսսա գնալու համար։

Հերթեւցեանի վերջին բաց նամակից երեւում է, որ նա այնպէս է կարծել, թէ այդ փողը ժողովրդական է, դորա համար ուզեցել է ծախսել։ անկօնտրոլ կերպով, բայց խիստ հիասթափուել է, երբ իմացել, որ փողը Թշուառ Մինասինն է։

Մենք, այդ երիտասարդի և գործի առթիւ տեսնուել էինք տեղւոյս հմուտ փաստաբանի և ծանօթ քննչի հետ և հիմնաւորապէս տեղեկացել, որ ոչ մի «կոնսուլ չէ կարող դեր խաղալ այդ գործում, նրան կդատեն ռուսական օրէնքով. այդ պատճառով էլ հասարակութեան մէջ հանգանակուեց 400 ր. և վարձուեց Եկատերինոսլաւի յայտնի փաստաբան Ալէքսանդրովը։

Պրոկուրորի թոյլտուութեամբ տեսնուեցանք Մինաս Հայրապետեանի հետ. Թշուառ երիտասարդը արիւն-արցունք է թափում. Տէր հայր— ասաց նա—որտեղ էիք դուք, երբ Թշուառ որբուկիս թալանեցին, մի՞թէ դուք չգիտէիք. գոնէ այնպէս արէք, որ ես լինեմ վերջինն... Տարաբախտաբար, մենք միայն իմացել ենք այն ժամանակ, երբ փոխադրուած—վերջացած է եղել, եթէ ոչ Հերթեւցեան արժան չէր լինիլ ստանալ այդ խոշոր գումարը։

Ահա թէ ինչ արժէք ունի Հերթեւցեան-Հրայրի՝ «Նոր-Կեանք»-ի 27 համարում զետեղուած

ղած յօդուածն և ինչ անձնաւորութիւն է նրա հեղինակը. Իսկ նամակի միւս կէտերի վերաբերմամբ ոչինչ չենք ասում. այդ առթիւ բողոքել ենք Տագանրօգի պրոկուրորին։

Մեծապատիւ պատուաւոր հոգաբարձու պ. Եղիա Քուշնարեանի՝ „Նոր Կեանք"-ին ուղարկած հերքումն։

Նամակ խմբագրութեան

«Նոր Կեանք»-ի 27 համարում զետեղուած է ճշմարտութիւնից զուրկ մի յօդուած, որով անօնիմ թղթակիցն անպատուում է տեղւոյս արժ. Ստեփաննոս քահ. Պապայեանին և թոյլ է տալիս անխղճաբար ասել, իբր թէ աղօթատան հարցը ձգձգելու պատճառն մեր քահ. է և այլն։

Իբրև աղօթատան վրայ մօտ 16000 ր. ծախսող, ես աւելի լաւ գիտեմ այդ, քան թէ անկիւնից քարեր ձգող ստախօս «Հրայրը»։

Եօթը տարի շարունակւող աղօթատան հարցը՝ իր ցանկալի վախճանն ունեցաւ Ստեփաննոս քահ. անդադար աշխատութեամբ։ Նա հասկացրեց ժողովրդեան որ մինչև աղօթատունն ժողովրդական չլինի, ոչ մի շինութիւն չի կարելի կառուցանել նրա բակում, այն ինչ ժողովրդի թշնամիներն հաւատացրել էին նրան, որ ես զրկուել եմ իրաւունքից, թոյլ տալով աղօթատան գլխին խաչ դնել։

Այժմս ալ աղօթատունն պարտք է ինձ 1000 ր., բայց ես հաւատալով քահանայի և պ. Յակովբ Թովմասեանի ազնիւ խօսքերին՝ մի ամիս առաջ հասարակութեան յանձնողական թուղթն ստորագրեցի, որը քահանայի միջոցով ուղարկեց Սրբազան Առաջնորդին բարձրագոյն ճուիթիւն ստանալու համար։

Քահանայի գործ դրած այսչափ աշխատութիւնից յետոյ, անձնական կրքերից կուրացած, դուրս գալ և անամօթաբար վիրաւորել մի մարդու, փողոցային մարդկանց վայել բան է։

Վերջացնելով նամակս՝ զգւանքս եմ յայտնում «Հրայրին» և շնորհակալութիւնս Արժ. Ս. Ք. Պապայեանցին, որի աշխատութեան շնորհիւ ազատուեցայ ես անյարմար դրութիւնից, բամբասանքից, իսկ ժողովուրդը հեռացնելով իր միջից ակրաւականութեան պատճառները, սեպ հանեցինք դարձաւ։

1905 թ. 13 յունիսի
Լոնդոն

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
C.C.P.A. ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
7/XI 1922
ИМЕНИ А. МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Այն հերքումն, ինչպէս կպահանջէ կարգը, ուղարկուեց «առաջադէմ, ճշմարտութեան ջերմեռանդ պաշտպան և որ և է կուսակցութեան չպատկանող «Նոր-Կեանքին» բայց նա քաջութիւն չունեցաւ տպագրելու և ճշմարտութիւնն երևան հանելու։

1907 թ. 16 սեպտեմբերի
Լոնդոն

ՍՏԵՓԱՆՆՈՍ ՔԱՀԱՆԱՅ
ՊԱՊԱՅԵԱՆ

«Ազգային գրադարան»
NL0195221